կրնար ըլլալ երկ երկրին իշխանութիւնները անտարեր կը մնան  
կատարուող աժխառանիներուն համդեկ և չեն օսար պէտք եղած դիւ-

բարիւններն ու բաջալերանները: Յնտոյ, ո՞վ է որ պիտի նակակռակ արտադրութիւնն ու մեցակցութիւնը, աւելի արդիւնաւու դարձնելու նամար գործը:

Այս կողմէն եզիպատական կառավարութիւնը երկ քոյլ եղած է սկզբնական օրջանին, այժմ նետզմենք կը գիտակցի նարտարարութանին կարեւորութեան: Եզիպտոսի նարտարարութեանքանները, իսկապէս, դառնացած էին տեսնելով որ կառավարութիւնը ոչ միայն չի բաջալերեր իրենց աշխատանքը, ալեւ անազին դժուարութիւններ կը յարուցանք գործարանի մը սփնուրեան եւ աշխատելու արտօնութեան նամար, անտեղի տուրենք եւ ծախսենք բեռցնելով ձեռնարկին ուսին:

Այս պատճառով՝ դամնակցութիւնը աժիպուած է լայն բրոբականի սկսիլ, նախ փարատելու նամար կարգ մը նախապատրութներ, յնոյ ապացուցանելու նարտարարութեանին կարեւորութիւնը: Այս բրոբականին նետն անելով է որ կառավարութիւնը ձեռնարկած է նոր բաւմբերու, կամուլցներու, ջրանցքներու սինութեան: Վերջին ճինզ տարիներու ընթացքին ծովային քետային նաւահանգիստները կրկնապատճենած են: Մեկրագործութեան եւ առեւտութիւնը ուղղութիւնը, զոր նարտարարութեան բաղադրականութեան կողմնակիցները յաջողեցան պարտադրել իշխանութեան, նամբայ բացաւ նարտարարութեան զարգացման:

Այսօր, նարտարարութեար նոյնիան ազատ է (բանի կը լրացնէ առողջապահական պայմանները), ուրան դրամափրութիւնը (բանի կը պանպանէ օրենքն ու օրինական սակը):

Նարտարարութեան զարգացումը, Նզիպտոսի մէջ, կարելի է բացաւել անով նաեւ որ Նզիպտոս կ'ապրի իր զարգօնքը: Աշխատաւու ձեռներու արժեկին գիտակցութիւնը, նաեւ ազգային նասունութիւնը խրան կը դառնան այս աշխատաւոր եւ ազգայնական ժողովուրդին, անկարելին փորձելու իր ճիգերուն մէջ: Միւս կողմէն, վարչական տեսակետով, մահային բարեկարգութիւնը մեծագոյն բարին է որ կենայ ընծայուած ըլլալ եզիպտական նարտարաւեստին:

Հակառակ մեթենաններու պակասին. բենիմի անկարութեան եւ կազմակերպումի պկառութեան, եզիպտական նարտարարութեար կը ձգտի ասպարեզ կարդալ նւրոզային քե ձաբոնին: Ասիկա չափազանցուած ըլլայ բերեւս, բայց անոնք որ կը նանշնան Նզիպտոսի գործաւորին չարքառութիւնը՝ կրնան վկայել որ անոր պէս յամառ աշխատող ձեռքեր ուստ չեն գտնուիր:

Օր օր աւելի առատ, աւելի մասուր եւ կատարեալ նիւր նրա-

պատակ դնելը մտահոգութիւն մըն է եղիպտական նարտարարութեսին, կարենալ մցցելու օտար նեղնդին նետ:

Միջազգային անորոշ կացութեան նետեանով և բարդութեանց բերումով, ամէն երկիր կը նկրափ կարօ չմալ միւս երկիրներուն: Նզիպտոս, բաղաբական փափուկ նանգամանք. Եւրկայացնող երկիր մը ըլլալուն, աւելի պահառներ ունի մածելու անսական անկախութեան մասին: Աւ յետոյ Նզիպտոսի երիտասարդութեան համար արժանապատութեան խնդիր ալ է օտ:

Աւելորդ չըլլար նու լիօնակել Նզիպտական նարտարարութեսին այն տարրերը, որոնք վերջին տարիներուն մեծ զարկ ստացան:

Քիմիական նարտարարութեսին մէջ մնին ունին բառչուու իրեր, բժօկական առարկաներ, անուշանութիւն, Եւրկեր, մելան, լուցիի, նականնեխականներ, ապակիդեններ եւն: Հիւսուածելինի մէջ՝ գուլպա, կանեփ, բուրդ և մետախ, նաեւ ժապաւեն, օալ, փողկապ, բարպոււ, գորգ, եւն:

Տան պիտոյները կարելի է բոլոր մանրամասնութիւններով զբանը նու: Խոզանակներու, աւելներու, փերակներու, սանմարաններու Ենրածումը այլեւս պիենանք է:

Մետաղէ առարկաններու տինութինը նետզինեակ կը նրբանայ: Աւխառուած երկարը, որուն ռանկիրան հանդիսացաւ նայազգի Լեւոն Կոկաննեան, խօսկան նրաօպերաներ կուռայ մեղի: Առողջապահական իրերու պատրաստութիւնը մեծ ծաւալ ստացած է: Այս մնին կրնանք գռնանալ եղիպտական կատիօվ և ելեկտրական կազմածներով: Հաւկ կա՞յ սննդել եններու մասին խօսելու: Նզիպտոս մեծ բանակութեամբ ձեր, իւզ, պանիր կ'առածէ: Շոխոլայի և պահածններու տինութիւնը վերջին տարին անհամեմատական վիճակ մը ստացած է: Սպանիոյ աղեկն և ծունասանի մէջ հաստառուած նոր օրէնքն վեց, երբ այդ տեղերն ծիրախւլ չներածուիր, Նզիպտոս սիխուած պիտի ըլլայ բազմապատիել ծիրապտուղի մօակութեան իր նիզերը: Սուեկի և Քանրարայի կաղմերը ընդունակ են ծիրապտուղի մօակութեան: Աւ ի՞չ ատենէն Նզիպտոսի մէջ բամպակի իւղի գործարաններուն կից կ'աւնենանք նաեւ ծիրախւլի նմլարաններ:

Իշխանութեանց նողածութիւնը, նաեւ աւխատաւոր դասակարգին պարմաններուն բարելաւումը՝ Նզիպտոսը կ'օժէ առաջնակարդ նարտարարութեսի կառույցով մը: Այս պարմաններուն տա՞յ, Նզիպտոս կը դիմէ խօսկան ազատագրութեան, անտեսական անկախութեանց: Վերջերս կազմակերպուած լիակատար մարդահամարն ու վիճակագրութիւնը մեծապէս պիտի դիւրացնեն նարտարարութեսականացման գործը: Սուրեւ նամառօս վիճակագրութիւն մը՝ նուև

Եւ տիմուած նիւրերու ներածումին մասին, որ կրնայ գաղափար մը տալ.—

### ՀՈՒՄ ՆԻՒԹԵՐՈՒ ԵՒ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՒ ՆԵՐԱԾՈՒՄ

		1913	1934
Հանքային ձեթեր . . . . .	թոն.	9.039	130.656
Պէնզին . . . . .	"	1.884	12.977
Մողոթ . . . . .	"	8.302	164.902
Բարաֆին-վազիլին . . . . .	"	122	7.284
Զանազան մեքենաներ . . . . .	եդ. Ռոկի	741.796	2.630.863
Դիտական գործիքներ . . . . .	" "	56.034	203.366
Երկար և Պողպատ . . . . .	թոն.	42.764	102.253
Զոյլ երկար . . . . .	"	1.683	3.152
Բանագ (տան)	"	11.727	31.744
Բուրդ . . . . .	թիւկր.	162.868	216.033
Մետաք . . . . .	"	200.094	1.348.290

\*\*\*

### ՇԻՆՈՒԱԾ ՆԻՒԹԵՐՈՒ ՆԵՐԱԾՈՒՄ

		1913	1934
Բամոզակէ նիւթեր . . . . .	եդ. Ռոկի	112.212	9.457
Կարսութ . . . . .	" "	117.984	53.548
Մետաղ մահճակալ . . . . .	" "	81.614	3.231
Կաշիէ կաշիկ . . . . .	Զոյլ	792.006	96.963
Պատրաստ կաշի . . . . .	եդ. Ռոկի	142.996	87.205
Զանազան ալիւեր . . . . .	թոն.	203.547	4.040
Եաքսորեզէն . . . . .	եդ. Ռոկի	100.207	30.041
Լուցիի . . . . .	" "	81.368	64.731
Բամոզակէ թել . . . . .	թիւկր.	2.693.885	745.215

Այս վիճակագրութեան մէջ նկատի պէտք է առնել այն պարագան թէ 1913 հն ասդին բնակչութիւնը աւելցած է եւ կեանէր աւելի սղած:

Նեկու խօսք ալ եզիպատական նարաւարուեսի դերին մասին:

Քաղաքակիւր պիտի չկոչուէր երկիր մը որ յառաջադէմ ըլլար մօակուրային, երկրագործական եւ առեւտրական տեսակետով եւ չունենար լաւ կազմակերպուած նարաւարուես մը: Աւնենալ կամ նարել պէտք եղած նում նիւրերը, եւ չունենալ զա-

նոնք կերպարանափոխնելու և օգազործելի դարձնելու միջոց՝ յետամացութիւն մը պիտի նկատուեր:

Երկրորդ. Երկրազործութիւնը չի կրնար զարծ նայրայրել անող բնակչութեան, որ հաղաքակրութեամբ աւելի անընդունակ կը դառնայ զիւղացիական կետներն: Այսպէս, զիւղացի պատճին՝ իր կրութիւնը կը ստանայ հաղաժին մէջ, ուր եւ կը զարգանան իր նաևակները: Իւ կարողութիւնները արժեցնելու եւ իր ուսումը կիրարկելու նոր դաշտի մը պէտք ունի ան: Այս տեսակէտով՝ նարարարութեար պիտի ներդասենակութիւն բերէ եզիպահական ընկերացին կետներն, ուս մը բարդութիւններու և ազեններու առաջբն առնելով:

Երրորդ. նարարարութեար պահանջելով շատ աւելի մեծ պատասութիւն, ուսման աւելի ընդարձակ որդանակ եւ մաժի լարում, երթասարդ եզիպացին առիք պիտի ունենայ աւելի եփելու: Այսպէսով երկրին մասուր-բարոյական ընդհանուր մակարդակը պիտի քարձանայ: Ճարարարութեսին ճամար պէտք է ձեռներեցութիւն, ճախանեսութիւն, զոնողութիւն, նուիրում, քենիք ճանօրութիւններ, փորձառութիւն եւ մանաւանդ խիզախութիւն: Այս առաքինութիւններով՝ եզիպացին ճամարձակութեամբ պիտի կենայ հաղափակեր, աջաւարենին դէմ եւ անոր նետ ճաւասար քննով ու ճաւասար առնականութեամբ պիտի կրնայ վիճիլ մարդկութիւնը շահագրգուռ ճարցերու ուրեզ: Ահա նարարարութեսին դերը նզիպասոյ մէջ:

Ս. ՆՈՒՐՃԱՆ



### Խ Ա Հ Ե Ր

Ռուիսի սերե նետնիլը կը նմանի դիմակ մը կենյալ: Ռուան ալ զեղեցիկ եղած բլայ դիմակը, կենենի պակաս ուսուզ աննամ ու անսանի կը դարձէ զայն մեզի, այն առանձ ու կենեանի դիմերեն անհասդեղ կը նայեցնեմի իրն:

\* \* \*

Դրամը մարդկային երամկութիւնն է վերացար, ան քէ ինչո՞ւ այն որ անկառող եղած է այս երամկութիւնը զուծնապէս վայելի, իւ ամրոց սիրը կը կազէ առարին:

\* \* \*

Մարդիկ իրառու ճամփէա մի՛այն անօարենութիւն ունին. կինու աղէն բնութեամբ բժնամի են իրառու...:

ՏՊԹԵՆՀԱՊՈՒԵՐ

# ԿՐԿՆՈՒԱԾ ՍԽԱԼՆԵՐ

«ՏԷՇ ԿԵՑՈ ԴՈՒ ԶՀԱՑՄ» ԵՐԳԻՆ ՀԵՂԻՆԱԿԸ

Գրեգ' Ա. ԱԼՎՈՅԱԶԵԱՆ

Անցեալ տարի Դաւթէժի Արամեան վարժարանին հարիւրամեակին առթիւ յանուխ յիշատակութեան առարկայ եղաւ. այդ կրթական հաստատութեան սկզբնական օրերը առ հունվարի վարող Մեսրոպ Թաղիազեանցի (1803-1858 թունի 10+) անունը, որ արգարե յիշատակութեան արժանի անձ մընէ, վասնզի անիկա Հայ նոր գրականութեան անդրանիկ ուսմվիրաներէն մէկը եղած է աշխարհաբար գրական լեզուի կազմութեան արշալոյսին և միակ անձնաւորութիւնը՝ որ Հայութիւնը իր ամբողջութեան մէջ հանչալու պատեհութիւնը ունեցած է անոր ժառայելէ տառչ. Ան ձնած էր Հայուստանի մէջ՝ Երեւան և ուստի էր Եղմիածին, շրջագայած էր հայրենի աշխարհին նութիրական և յիշատակներով լի վայրերը, և ապա տեղ տեսնելու, զործելու և աշխատելու եռանդով տուցուն, այցելած՝ ու գտակար զործունէութեամբ նշանուոր հանդիսացած էր Արեւելեան գաղութներու, ինչպէս Պարսկաստանի և Անունու Հնդկաստանի մէջ, առանց տար և անձմութ ըլլայու. Հայ ազգին արեւմտեան հաստածներուն, ապրու ըլլալով նաև անոնց կեղրոնին է. Պարսց մէջ:

Թաղիազեանց այսպիս ազգին ամէն հաստածներուն, զործերուն, կեռնքին, լեզուին և բարգերուն միջամուխ ու գիտակ դառնալով, անձման ախպար մը հանդիսացած է Հայ մտաւորականութեան մէջ.

Այս ուշագրու դէմքը, որուն զործունէութիւնը մասնաւորապէս Հնդկաստանի մէջ չափազանց գնահատնի եղած է, ինչպէս շատ անգամներ, նոյնպէս նաև վերջերա, Դավթէժի վարժարանին հարիւրամեակին առթիւ, յանիրաւի կամ սխալմամբ ներկայացուեցաւ իրը նեզինակը օճէր կեցո դու զՀայու երգին, շատ մը գրազներու, մանաւանդ բարզմահմուտ խմբագիրներու կողմէ որոնք կը սիրեն ծաղրել ուրիշներու ագիտութիւնը:

Այս սխալը որ հինէն կու գայ, ժամանակը հասած է որ ուղղուի և եթէ հնար է այս երգին խեկանան հեղինակը վնասուի:

Այս զարմունացիօրէն արմատացած սխալին գլխաւոր պատճեանատուն կը թռւի բլլու Մ. Նալբանդեանց որ իր Մեռելամարցուկ յաջուածքին (անս Հիւսիսափալ, 1859 էջ 681-688) ձանօթութեանց մէջ անուշադրութեամբ այս երգը կը վերադրէ թագիազեանցի և կը յարէ. սեթէ հնար ունենայի ես, անենասուրը պարտուկանութիւն կը դնէի ամէն մի հայր վերոյ անգիր ուսանի այս երգը. Մինչև այսօր իմ կեռնքի մէջ չեմ տեսած կոմլամ մի այցպիսի երգ, անս բուն ազգային երգ...»:

Մ. Նալբանդեանի այս սխալ վերադրումը պատճառ եղած է որ բոլոր Հայ երգարանները՝ սկսեալ Միանսարեանի Քնար Հայկանէն (1868 Թեթերապուրէկ) միորինակարար կրկնեն նոյն սխալը, անիրաւելով երգին բան հեղինակին որ անձանօթ կը մնայ:

Այդ երգին հեղինակը ո՞վ որ ալ է, կը կործեմ թէ զայն խմբագրած տակն աչքի առջև ունեցած է անգիտեան ազգային երգը՝ «Տէր կեցո զբացաւորը սկզբնաւորութեամբ, և անոր նմանողութեամբ է որ զայն յօրինած է, ինչպէս յետոյ պիտի անդրագաւանած»:

Երգը հեղինակուած է 1820ին կամ նոյն իսկ անկէ ալ առաջ, և լոյս տեսած է այդ թուականին Կալկաթա հրատարակուած Հայելի Կալկարեան անուն հանդէսին մէջ:

Թանեսթ տարիներ յետոյ՝ 1847ին, Մեսրոպ Թաղիազեանց որ 1845էն ի վեր կը հրատարակէր Արարատան Ընկերութեան Ազգասկր շաբաթաթերթը, պատահօքէն ձեռք անցնելով Հայելի Կալկարեանի մի քանի թիւերը, «Ազգասկրէ (անս թ. 1024) մէջ կը գրէր. ոյսմի Տեսան 1820 տպադրէր տա ի կորկաթա հրատարակագիր իմն հայերէն, անուանեալ Հայելի Կալկարեան, որոյ ամրազն հազիւ գտանիք»:(\*)

Թաղիազեանց իր ձեռքը անցուցած այս սակաւագիւտ հրա-

(\*) Արդարէ այս լրագիրը նույսազիւ եղած է և առօր նամար Հայ լրագրութեան առաջին պատիշի Հ. Գրիգորի վրա. Գալեմեարեան չէ եղած իր նաուին մէջ անու մասին սկզբաւորիմներ առ: Բանակը մը վերեւ այս լրագիրին ամրողական նաւահածն գտած էր և, անու վրայ սկզբաւորիմներ ունած էր այնպիսի ձեռն մը որ իր քե այս լրագիրի վրայ ոչ ո՛վ զազափառ ունեցած ըլլար իրէ առաջ: Դժբախտորա իր ուստարութեան վրասած էր Հ. Տամայի Վ. Զայելիի մէկ յօսուածք՝ հրատարակուած Բաշմագէտի (1907 տարի) մէջ, ուր աղջին տռաւ էին այս հանդէսին վրայ բաւական կարելու սկզբաւորիմներ, որով հայ ներկայացնել զանց կ'առնեմ:

տարածելու թենէն, իբր հետաքրքրական կամ արժեքաւոր կ'արտա-  
ռըսէ երգու հասուածներ, որոնցմէ մէկն էր ռաջարենածանօր  
նրապարակութիւն Օնանասփիւռ ժողովոյս ի Բումբալիս զերնա-  
գրով 1820 Օգոստոս 16ին Օնանասփիւռ Ընկերութեան անդամ-  
ներէն Մարտիրոս Մկրտչեանի տաենարանութիւնը (ահս Ազգա-  
ուր թ. 102-103) և երկրորդը՝ «Տեր կեց դու զՀայս» զերնա-  
գրով ձևաօթ երգը:

Մ. Նազրիանզեման, Ազգասկր-ի մէջ կարգալով զայն, հակառակ  
անոր որ տակը դրաւած էր Հ. Ե. Ազգբանատառերը, որոնք Հայելի  
Կալկարեան-էն արտասալուած ըլլալուուն համար դրաւած էին, և  
ուշադրութիւն ըրտն չըլլալով նոյն խոկ Թաղիաղեանցի գրած  
տողերաւն, այդ ստանաւորը վերտպրած է թերթին խմբագիր  
Թաղիաղեանցի տառնց ունէ բանաւոր պատճառի:

1820ին այս երգը հրատարակուած տաեն, Մեսրոպ Թաղիաղ-  
եանց հազիւ. 17 տարեկան պատանի մըն էր և կը զտնուէր էջ-  
միստին և ոչ մէկ յարաքերութիւն ունէր Հնդկաստանի հնա, ուր  
գոցած է 1823ին երգին հրատարակութիւնէն երեք տարի յետոյց  
Հնա անիկա կարճ միջոց մը ուսուցչութիւն ընելէ յետոյ Մար-  
դուաբրական Շնմարանի մէջ (1825), կը զգայ թէ չունի պէտք եղած  
պաշտը և կը կարստի տուկաւին ուսունելու, ուստի կը մտնէ  
Անգլիացւոց Եղիսկոպոսական Շնմարանը ուր իր ուսումը կը  
շարունակէ տակաւին չըրս տարի (1826-1830):

1831ին կը գտանայ Նոր-Զուզա, 1833ին էջմիածին է իբր  
գրագիր և իբր տպարանի վարիչ, 1834-36 կրկին Նոր-Զուզա,  
1836-1837 Դավթէժ, 1837ին զարձեռու էջմիածին և 1838ին Կ.  
Պոլիս ուրիէ փախատական կ'արտաստանի Կալկութա, ուր կ'ունենայ  
այս անգամ թեղմնաւոր գործաւնէութիւն մը կազմելով Արարատեան  
Ծնկերութիւնը (1845) և Ազգասկր հանգէսը, ուր կ'արտաստանէ Հայ-  
ելի Կալկարեանէն տանելով այդ երգը, որ այսօր իրեն կը վե-  
րագրուի. մինչ ինչպէս վերի տողերը ցոյց կու տան, ինքն ա-  
նանց հեղինակը չէր կընար ըլլուլ:

Ինչպէս ըսի, այս երգին անծանօթ հեղինակը մ'զ որ ալ է,  
պատահար կը պատկանի Հնդկանայ մասաւորականութեան և  
հաւանորէն Հայելի Կալկարեանի խմբագիրը Յովհաննէս Տէր Յա-  
կարեանն էր, թերեւս անգլիերէնի զիասակ մէկը, վաճագի թեր-  
թին մէջ բազմաթիւ թարգմանութիւններ կան այդ լեզուէն:

Իր հերշուշմտն ազրիւրը, ինչպէս ըսի, միայն և միայն ան-  
գլխական երգը կրնայ ըլլուլ:

Առարկայական կերպով ներկայացնելու համար այս նմանու-

Թիւնը, հոս կու տանք Անդլիսկան ազգային երգին թարգմա-  
նութիւնը որ հետեւեան է.—

Տէ՛ր, պահէ մեր Արքան  
Արի՛ մեր մեծ Արքան,  
Պահէ Արքան  
Եռու անոր յաղբանակ,  
Երշմիւրիսին և վառ  
Քօյնի օսու ձմբանակ  
Պահէ Արքան

\* \* \*

Ելիր Տէր Առաւած մեր,  
Տրուել իր ոսախնե  
Ամօրտան  
Դուեն անօնց երեկ  
Պահէ վաս հնաբներէ  
Այս էր յաւանն Ինզէ  
Պահէ մեզ յաւ.

\* \* \*

Պարզեւէ՛, Տէր Ամար  
Պաւ զերթայր օլեր,  
Ապրի բազ ԱՅ  
Պաօապանի մեր օրէնք,  
Եղաղաւուրիսին իր զէնք  
Մեր սասազին երզին  
Պահէ Արքան:

Անարքայ Հայ ժողովուրդին համար, Հայ հեղինակը ազգին  
լրութեան պահպանութիւնը հիմնակէտ առած է և խմբագրած է  
հետեւեալը, որուն ուշողիր ընթերցումը ցոյց պիտի տոյ թէ  
որքան ազգուած է զայն խմբագրողը անդլ ազգային երգէն։

Տէ՛ր կեց զու զձայս  
Մւ արա զնոսա պայծառս,  
Կեց բզձայս  
Տաղումարիս վերին  
Հանին ձօնի նոցին,  
Տի նովիմք մատրացուք  
Ապրի յասին

\* \* \*

Ո՞յ Տէր մեր, Տէր փարա՛,  
Զազգ մեր համայն փրկին՛  
Ի բրժանանց.  
Լափա՛ զայր նոցան,  
Հա՛ս զարմանայն բզրու,

Եւ զազգ մեր պարտավոն  
Առաջ եղօք:

\* \* \*

Ի բա իշխալ անդի  
Զարս Հայրապետի  
Մեր համատան  
Տերկայթուրիւն կիմաց  
Հօր մեր առուածազգեաց  
Շնորհան պատին մեր հարց  
Ու զին եպօւէ,

\* \* \*

Աշօվդ համատարած  
Զազգ մեր արտահայտած  
Փոյր զաւմարեա՛  
Օսօխար Ռաւրատեան  
Ի վայր մեր ծընթափեան  
Ու այժմ է սեպհական  
Օտար ազգաց

\* \* \*

Առասինա՛ ի բարձամց  
Տհամակցուրիւն կամաց  
Ի մերազմեացն  
Հոմքն ի մէնց յարա՛  
Պատապան ազգի մերոյ,  
Տուր նըմա ցուոց հումկու  
Հովանել բզնեզ:

Նմանութիւնը այնքան ակներեւ է որ կը կարծեմ թէ ամէն  
ոք երկու երգերուն վրայ ակնարկ մը նետելով պիտի համոզուի  
չուտով թէ «Տէր կեցո՞ դու զՀայսօսի նեղինակը Անգլ. ազգ. երգին  
նմանողութեամբ հայ երգ մը գրած է, պատշաճնեցնելով մեր ազ-  
գին պայմաններուն»:

ԱՐԾԱԿ ԱԼ ՊՕՅԱՃԵԱՆ

~~— 40 —~~

### Խ Ա Հ Ա Ր

Զի կրնար ըլլալ, որ զիրէ մը բարոյական կամ անբարոյական ըլլալ, զիր-  
երը լաւ գրաւած են կամ գէ:

\* \* \*

Միայն անոնք պէտք է մամբ երգեն, սրմէ երգը աւելի գուշակ է բան  
մամբ:

ՕՍԿԱՐ ՌԻՎԵԼՏ

## ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԲԱՐԵԾՐՁՈՒՄԸ

Գրեց՝ ԱՌԻՉԱՆԻ ԵՂԻԱՑԵԱՆ

Հայ զառափարահութեան պատմութիւնը ուսումնաբութիւն մը և որ գեռ լման չէ կատարուած. Տօն համ առաջ ունինք նախնեաց և արդի մատինազրութեանց մէջ՝ կրթական գործի սկզբանաւորութեան և առկա աղջային հիմքրու վրայ կազմակերպութեան մասին. Ամէն դարու մէջ կը հանդիպինք յիշառակութեանց ըրացմէ կրնաւը և անեցնել թէ անցեալին մէջ ի՞նչ պայմաններու առկ ասացած է Հայ պատասին իր մասային զարդացման առբերքը. Մանաւանդ անցեալ զարուշը լանին, Հայ վերածնութեան և նակատազրական գեղցերու լրեան, աղջային վերակազմութեան գործին ամենէն կարեւոր մասը կը կողմէ զարուի կազմակերպութիւնը, թէ ի՞նչորեւ աղջ արթնաց կրթութեան պետքին աջեւ և ի՞նչորեւ լարձաւը նախնական վիճակ մը զարգացաւ, ասկա զարձաւ աղջային հաւացական հենանրէ և հաստանց իր շարչ կրթական զարւուր կերպուները Արեւելեան և Արեւմունեան հայոց մէջ.

Սակայն անցողութիւն յիշառակութեաներ և ցիրուցան գրահանութիւն մը միայն այդ բաւօրին մասին. Հայ ՊԿՐԸԸ. ուր միեւրաւած էն ցեղային արժեքները, և իմաստի վերածուած՝ աղջային վարձառապետութեանը, մեր ամենէն քիչ ծանօթ հաստատութեան և ցննական տեսակետով. մեր լրջորեն չէ փարձան Հայ մանկավարդ մը՝ այս նիւթին վերաբերեալ առաջը հաւացել, համազրել և անցն մէջէն երեան բիրել Հայ զառափարահութեան զարգացուամի պատմութիւնը զարերու ընթացքին. Ունինք Հ. Վ. Հայունիկ Շատառիփարահութիւն կին Հայոց քաջ գործը, արժեքաւոր աշխատանք ինքն իր մէջ. բայց ասիկ հաւացածոյ մը և ակնարկութեանց և յիշառակութեանց պազաւած կին մատինազրութեան էլեկտէն, թէ կին Հայունուի մէջ աղջ ի՞նչորեւ կ'անցընեին իրենց մանկավարդիւնը՝ պատասխանիւթիւնը և երիտասարգութիւնը. Ունինք նաև Գր. Սարգսեանի Անդիքերեւով գրուած History of Education in Armenia գիրքը. “Ո կը ներկայացնե Հայունուի մէջ կառարուած մշակութային աշխատանքները, առանձին առանձին նկարութելով զանոնք. Կը պահոի միշտ համազրաւթիւն և վերլուծուած՝ զառափարահութեան լարձաւին ցեղաւոր ընթացքին, զարերու ալիքներու վրայէն, իրերւ սիսուէն և մանկավարութիւն. Պահի մը արդի առաջ Գեղրդ Մերուդ Հայի Հայունութիւն մէջ առանձ հաւառածով մը կրթական գործի զարդացման հարեւանցի մէկ ակնարկը. Աւ այսպէս ուրիշներ.

Մեր գիտառները էապես հայ հետեւցի մէջ զառափարակական դպրութիւն առաջ առաջ առաջ առ ու զբաղին հայ մասաց սերունդի զառափարակական թեսն աղիք դարձավ, յենարան և հեղինակութիւն պիտի զանեն իրենց նախորդներուն կառարած աշխատանքին և հաստատած արժեցներուն մէջ, որթական մշտից որ չի գիտեր թէ իրմէ առաջ նկազների ի՞նչ ուղղութեամբ աշխատեցան, ի՞նչ նեղիներ գիտադրաւեցին և յաշինեցին, ի՞նչ նամրուներէ անցան և ինչու, ցեղին անցեալն ենող որդէ մը զրկուն, ինչպինց զառափական ուղղութեանց ուղած աշխատաւոր մըն է. հաստատած ընթացք մը չի կրնոր ուու իր զօրքին. Որպէսներ իրեն կը պատի էական բան մը որուն կաթի և ուրիշ սահմայ իր հեղինակութիւնը.

Այս տարիներ տևելի եւս խոսցաւ մեր մէջ համազւմը թէ մեր մանկազարժական պատրաստութեանց մէջ առաջին տեղը պէտք է որուի հայ զառափարակական թեսն հանդրուաններու ծանօթացան, ընդհանուր լման զառիկերպ մը ըմբռնել թէ ի՞նչու հայ կրթական միտումը զարզացոյն կերպերէն սկսելով հետզետեւ գիմնազիական զարձաւ այն հաստատութիւնը որ է այսոր — կարեւորագոյնը մեր ողջային զայտութեան ամրուներէն. Նոյն իսկ աւելի կարեւոր պիտի նկատեինք այդ գիտութիւնը յան թէ արգին կոչուած ներզական և Ամերիկան մանկազարժամբեան նորպայն մեթաներու հանաւումը. Առաջ պիտի արժեքաւորուելին և խորացուելին հայ ցեղի յառակ մանկազարժամբեան մը մէջ, զօր զարու և նախ լաւ հանձնալ.

Արդ, Աշբային կրթութեան պատմութեան ուսումնասիրութիւնը՝ ցեղին սերուն ու ցոյին կրող առեն մշտիած անձի մասզրութեան արժանի է. Արզկւանը ինչպէս քաղաքական պատմութիւնը զառից հը ցուցնէ պղբին ներմական մեծութեան, կրթութեան զառմութիւնը ցոյց կուտայ ցեղին նկարագիրը, անը հաւացած զնաւած արժեքները, հանեսած ու մացրու զնեւած, որուն պիտի փօխանցուին պատայ սերունդներուն, Դիմանը թէ ի՞նչ արժեքներ տևելի բարձր զանց հոյը և ուզեց որ զանենց փօխանցէ իր յաշուրդներուն և ի՞նչ կերպով ուզեց որ կատարուի այդ փօխանցումը, Կը հշանակէ թափանցեն անը զաղափարներուն կետեցի մարին, զիւնալ անը աշխարտանացցը, անը նորին ընտանեկան և ցեղային կենացանութեան զանենցն ու պայմանները.

Կը տեսուի թէ ի՞նչ տեսուեկ կարեւոր կուզեսի նկատել այս աշխատանքը. Զօւս զատմական հետացրցրութեան մը մշտած չէ որ պիտի փօխէքինց հոս բանու էջ մը յօւզումնալի այդ զատման թենէն, այլ մանաւանդ մանկազարժական զարգաւրանցէ մը մշտած. Դիրք մը հազիւ պիտի բաւեր՝ լման լափազ ամփոփելու համար այդ զատման թիւնը, երեւան ընթելով հայ զառափարակական թեսն մէջ տիրող պիտին, այդ շարժման իրաւանչիւր լրջուակին մէջ զետեղելով զառիքը կարեւոր գեմքերու, քննելով զարէ զոր տիպարներ գըղուցներէն, զնել անոնց ներքին կեանցը, ուսուցման մեթուր համրան, և եթէ կարելի է համարել բարելրջութեան ընթացքին որ կը յայտնակ զարեւու մէջէն հայ զարցոյի կատարած աշխատանքներէն, Բայց մնէց կը գուշանակ հոս պրակով մը. գեր ամբողջական յասակ պատկեր մը կազմելու համար մեր ներմի գիմուսոր գիմներով.

## ԱԼԹԱՅԵՍՈՆ ԴԱՍՏԱՐԱՎՈՒԹԻՒՆՆ.—

Մկրտիչ կարելի է նշանակել, Դաստիարակութիւնը նիւթ մըն է ուրան ի յարմարիք և ուզգառնեց բանաձեւը։ Անենէն յետին ցեղային կենացն իսկ ուներ իր մէջ գառափարակութեան պիտում մը, այն է նոր ուրունդը կենացի առաջնորդելու գործնական կերպեր։ Բայց երբ զառափարակութիւնը մարմաննեւ ուզենք իրը հաղմակերպուած ուսումնական գործորիւն մը՝ ևս զառափարակութեան կազմաւորուած Հայուն կորեկի ՎԱԼԱ ազատ կերպով նշանակել և թթանուական ՄՇՆԿԻՆ մէջ։

Առաջարակ, ենթադրելով Խորենացոյ զանիմաւոտերը յարչարժանէն, մեր մէջ էլ ընդունուած թէ երբեք Հայեր եւս ունեցած ընալ զառափարակութիւնը պաշտօնական գործորիւն մը, ինչպէս ուներ Ցայխեր և Հազվայեցեցիք։ Բայց մէջ էլ Խորենացոյն այն աշբատչքին թէ Հայեր շատ կարենակութիւն էւնի տար մասք զարդացման, առև այս նշանակութիւնը՝ թէ Հայեր չունեին կը բարակն պիտում մը։ Խորենացոյ ակնարկութիւնը պիմաւասիքութիւնն առան է, գը թափ մեզի, այսինքն յանաց զես վեազական ուսման էին հետեւիք։ Բայց այս ին նշանակեր միանդամայն թէ զարձական ուսման պիտում մը գը պահեն երենց։ Սպարառն ալ, ոչ նման Աթէնացի, և ուներ պիմաւասիքական պիտում, բայց ուներ զարձնական ուսմանց շատ զարդացած պիտում մը։ Խորենացին կը զանցասի միայն առնկատութիւնը պայու բանականից (Ա. 9.), այսինքն մասնաշական, հայեցական ուսմանց անկարեւորութիւնն էն։

Այդ պրաւանցին Հակոբակ, Խորենացին ինքն իսկ իսկ, իր Հայի էջերուն մէջ կը պատմէ թէ մեր նախնիքն ինչ զարդացամ ունեին, նայն իսկ տար պիտի և լեզուներ կը ուրգէին, ինչպէս Ցայ և Պարսիկ։ Արևացով արձանացրաւած են, կ'ըսէ, և առաջարին կը մասն առերու զարդաց մասենեցից և նայն իսկ իր արտօնացքին ցանի մը եւ ուստի կը պարծի թէ ինչպէս Հայ նախնիք ունեին զարդարժան արժանիքներ ունենալ պարզեցին զարդանական և զարդ իմաստութեան, և զարդարիւն իրարանիշիւր արձանացրացին ի վեց և ի պատմաթիւնն ու յիշէ պիմաւասիքն ևս և զարդացարժիւնն է։

Այդ Գրեներ զառայօթն ըստի թէ զիբաղուց և անկիր Հայաւանն իսկ ուներ Հանքային մասւոր մշտիւթեան պիտում մը, թէն շատ թերի և անկանոն բազմաւումը նույնառանի, Առքեանանի և այլց, և հետեւակ անձնոց։ Բայց յանի որ Կայ քաղաքակրթութիւնն Հայաւաննի մէջ, ուրիշն կայ և ուստի, Սեղմէ ձանձնուող բան ինչիրն է ա'լ թէ այն անեներ ուսում ըլլուր կամ ՏԵՍԱԿ, ու թէ ինչ եր անոր կերպն ու պարհան։

Մանաւանդ վերին շրջաններուն, Արտաւազի և Տրգոսի նման Հայով և Ցայ կը թթաւթեամբ զարդացած միացեր էին կը նար չետացրցրաւիւ կը թափան զարծով։ Այնքան մատ կաղեր ուներին ուրիշ ոզզերուն ենա, ինչպէս կը նային զառայիւ ունեց զինուարական զարդացան անեներան զառաթիւններին, և լզպարիւ կը թափան զառաթիւններ։ Մեծն Ցիցարնի որդին, որուն մատին Պաւարցու կը զիայտ թէ ինքն ալ անոն է անոր զարձ յանարին զիքերդութիւնները, հաւանորդն միակը էիր։

Կրիսնք հայն իսկ փոշէ մը ընել, եթէ պայմանները ներեն մեղի, վերանուառանելու համար անենց առանց առարկաները, և առեւելով Ասորաց, Յոյներու, Պարսից և Հառվայեցաց գրաբեանց:

Հայ պատահաւան մատոր զարդացամբ գծուար զարձնեց զիխա-  
ւար ինչիք էը թուի միայն գիրերու պահաւու այն առեն, և սկսեան  
այդ պահամին, հայոց լանցը տար գիրերով իրենց լեզուն զիի  
վերածելու — որ այնքան գծուար զարձ էր, որպէս հայ լէին կը նոր  
այսուհետ լայն առև հայերէն լեզուին վահկերն ու կաղերը — պա-  
ցաց մըն է թէ կար իրենց մէջ առանց սերը որ կ'աւզեր ամէն ար-  
դեւ յաղթել՝ գտնացամ գտնելու համար:

#### ԿԱԶՄԱԿԵՐՊԵԱԼ ԴՐՈՅՆԵՐ.—

Հայ գործցի պատմութեան վասուն դեսին վրայ ենց երբ Գրի-  
տանէական լրջանը մանենց, Գրիտանէանէաթիւնը ու միայն հոգեւար  
արթուրին, ոյլ և մատոր լոյտ բերաւ մեր համբենեց: Տրդատի և  
հաւուարիի որէն իսէ, օրուան հազարդ էին ևնլէն աշխարհի մատոր  
զարդացման, սիսու այդ լոյտ արածաւրիւ կազմակերպուած մե-  
ազի: Աղաթանգելու կ'ըսէ թէ հաւուարիւ, հայերը մերտեւ և հայ-  
րադեանիւնը կազմակերպուէ վերէ, տալիին գործ ըրու իրեն՝  
համազեւ թագուարը որդու զի ողբացներ էինեւ: Գրիտանէական  
նար աշխարհայեցցը պէսց աներ նար կըթական սիսուէն մը,  
արժան բանելու համար ծազզուրդին մացին մէջ: Ամէն կազմերէ  
ծազզուրդին չի անդիս անդիս բազմութիւն մանկաց: առ ի նիւթ  
վարդպետութեանց:

Ժիւանկոն դեսին մը վրայ կը մենենց այդ կըթական գործը:  
Նորանակն է արմատաթիւ ընել հեթանոս մատյանէթիւնը: Վազու և  
զմանդ մեսուի պաշտամունց ի բաց քերելու:

Կորեւար է միայն որ պետութիւնը հազմուաւորող էր այդ գործը-  
ներան. զիշերօթիկ էին և արքունի գանձէն առնիկ առնէին: Ցեսոկ  
մը ձրի կըթաւթեան սիսուէն էին հայոց: Գողափարի համար հիմնաւած  
կըթարուններ էին անենց:

Ուսուցմանց զիխաւար, և թերեւ միակ նիւթն է Ալբուկես գոր-  
տութեան, այսինքն ուսուցն այն լեզուներուն որոնց հայ մանուկին  
պիտի բանային Սուրբ Գրոց էջերը: Երկուց էին այդ լեզուները,  
առորի և յայն: Ուսունազներէն մէկ մասը առորի, միւս մասը ևնլէն  
դրութեան գործեցան:

Ուսմանց պատահանատուաւթիւնը հաւուարիւ կը թուի յանե-  
նան ըլլաւ այն Յաղմաւթեան նզրարաց զոր ևնոց բերաւ էր կե-  
տրիայէն: Արդ, տար սևուցիւներու ձեռցին առկ, այդ ըլլանի  
հայ գործը ոզզային ոզիի, ոզզային սևուցմանց խնդիր մը լուներ  
և չէր կընար անենալ: Ձևաւ կըթական շանչն էր զանենց պետ-  
րոց, մինչեւ զրոց գիլաւը: Ուսմանց առարկան տար է, և կըթական  
ոզզային սիսուէն մը չկայ ասկաւին: Նոր կրօնէի գիրցը կ'ուս-  
նին. այդ ուսման լնուրին հայ պատանիներ կը զառնան մարգա-  
րեակեաց, առացելածանութք և աւետարանաւառներց:

Ուսմին պետական այդ գործներուն զիրը գնահատելի եղաւ  
անշաւ պետական նար կընեցին բերաւ հայեցցը ճանօթացնելու:

ժազավորդին։ Գետաքիւն և նկեղեցի ձեռք ձեռքի, քրիստոնեաւթեան նոր լոյսը հաւազայթել առերի ոյդ փարաններէն։

Բայց ոյդ բոլոր կրթուկան գործառնեւթիւնը արդիւնք էր միայն երկու բարեկարգիւլուսուսորդիւններու, ժողովուրդին մեծ զանգաւումը անթափանց մեաց լոյսին, և երիտասարդութեան շատ աննշան մէկ մասը կրթուեցաւ ոյդ դպրոցներուն մէջ։ Տրդատի յաշորդները ոյդ դպրոց շարօննեկելու յարմար չելան։ Առաջ իրմէն և կուսարցիւն վերջ, չելան առ իրմէն կանչեած կրթուկան կանթեղներուն լոյսը։

Երկու սերունդ վերջ, Առձն Ներսէսի որով վերտափին ոյժ առա շարժումը, և այ հաւատցի կորպի ոյդ մշտէն, իր բազմաթիւ ոյլ անօրինութեանց հետ, չմուգաւ նաև վերտափին շարժման մէջ զեկ հայ մշտէսիթի մեցինոն։ Յարմար վայրերու մէջ կը կարգէր զպրոց յանաբէն և առորեցէն յամենայն դաւառ հայցց։

Նախնեաց ձրագրով երի առաջ ալ, բայց աւելի առածեւած ժազդրուկան իսւերու մէջ, Աշակերտներ առասարակ ցերեկաթիկ էին, փախանակ նախին գիւերութիկի։ Դպրոցները գաւառներուն մէջ հաստատած էին, փախանակ նախին մեծ կեդրուններուն։ և փախանակ արցունի դանձին, ունեին նկեղեցւոյ կալուածները։ Աւարրերութիւնը հինէն։

Հակառակ ոյդ դպրոցներուն, Առձն Ներսէս չիարզացաւ հեթանուսութիւնը վերջնականապէս արմատախիլ ընել և քրիստոնեաւթիւնը հաստատել առոր անգ, Փաւառու նկարագրելով ոյդ շրջանի հայց անապրերութիւնը քրիստոնեաւթեան հանդէպ և հակամը ևս գեղի և բանառութիւն, կը յարէ թէ բացառութիւն կը կազմէին աննշան առց զանդաման գիւերն և բալլէն և առորի դպրութեանց (Ե. Հա.)։ Ցայտնապէս դպրոցն եւտծներ էին անձնյ։

Հայ դպրոցի բուն ծագիւմը՝ ոտկայն անզի հանձնայ Ոսկեզարուն, և այ դպրոց կրտչակի գիւերն վրայ, պետաթիւն նորին պաշտպանի և զպրոցին։ Ապամշառուս թաղաւոր, մեկնեան հայ մշտէսիթի, Վերաման այսր անձնայն ուրեմ նոյնին կրթել և այժինն նոր դանձած գիրերը սորվեցնել։ Կորին, ինչ մին այդ սորվածներէն, կ'ըսէն։ Աշակերտութեան համարեւկազյուց և անաւելազոյնը կը խմբէին նորագիւս վարզապետութիւնը ուսուցանելու։ Այդ Շնորագիւս վարզապետութիւնը հայ առաքրու ուսումն էր։ Մանաւանդ Վաղարշապտուի մէջ, հայց թագաւորութեան և հայրապետութեան, առանձ մշտէսիթի ուր թարգմանանեցաւ Ս. Գիրքը, շատցան դպրոցներ, Մեռող ինչ գաւառէ գաւառ կը պատեր — Փայտուկարան, Գողթան գաւառ, Միւնեաց նշանաւոր աշխարհ, և պատմազած հողմանը և անձնին յետանաց անզեր — և զպրոցներ կը հիմնէր, Ժողովեալ մանկանու առ ի նիւթ վարդապետութեան։

Նորութիւն մը եւս կայ այ դպրոցներուն մէջ, քայլ մը եւս յառաջ գացած է այ դպրոցը։ Նախին առաւելապէս կրտնական ուսումն անգ, ճիմա առաւելապէս աշխարհական պատունեաց համար է ուսումնը։ Հասին ուսմանց, ալ թէ նեկեղեցականաց, (Փարպեցի)։ Արքին սիկզր մըն է առ հանրային պատ գաւառիարակաւթեան, որուն համար կ'ընտրուէին աշխարհուներ քընորեալս, ուզեկը և քաշառան (Գերմարոն)։ Մեռող շարօննակեց պաւել կրտնաւորց յա-

ուսկ գործոցներն ալ. Բայց բայն նոր զարկ սահմազները հանըային դպրոցներն են:

Հանապան կոչումներ ունի այդ ուսումնարանը, Փաւուսոս և Փարուցի ժողովը հը կունեն. Կաղանիկայութեացին՝ Շնորհուառն, Կորիւն՝ Շնուռառն, Թէ՛ Կեշերոթիկ թէ՛ մանաւանդ առքեհօթիկ են անենք. Աշտերաներ իրենց առաջնունին համեմատ հը բաժնեւեին Դամերու, որոնց զար զար կը խոսեր ուսուցիչը: Ամեն դպրոց ուներ իր առանձին վարիչը, դպրոպեն, Կոչում՝ որ գործածութեան մէջ եր Ցըզասի բացած դպրոցներն ի վեր: Ասկերերանին թարգմանիչը՝ յաւնարէն ուսուցի բառը (արտասահման) թարգմանած է Վարդպապեաչ, իսկ Ասխիապառամ հը գործածէ ուսուցիչը բառը:

Միարերան կորդոցներու ոսվարութիւնը ունեին: Գրելու համար հը գործածին պնիկին, մասով ճանկուած զրի ասխատի: Ուսուցիչը, վարդեցնելէ յետոյ, հարցում կ'ուզզեր, և ցան առդ անդ հարցաներու զատասիւնը միաւ ուսուցին բաժինն եր ցան ըմպելծ, այն է՛ ձեմ, Եղնիկ, ևս, լեզուին վարդեռը, Կ'ըսէ թէ մարտիչը պատէն կախուած հը մար:

Այսուհետեւ առջեկին, աւա, ևայ պատանիներ իրենց հայրերուն խօսու լեզուն զըսկ եւս արտայարակուած արուեստը: Նոր համենդ մը փանկած եր ամեն սրաի մէջ. ամեն ոք կ'ուզզեր ամբոխուլ այդ հարութեան, որ քրիստոնէական ըլլալով հանդեր ազգային եր մահաւանդ: Խախիին յօյն և առօրի դպրութեանց ուսումը չէր խօսեալ ևայ ողուն հազարյն: Կը սորզեր սախումուն ներքի գրեթէ: Բայց երբ ի՞ր մայրենի լեզուով սկսու դպրութիւն ընել, խանդավառուեցաւ: Փարուցիին հնառեւել ազին մէջ ամփոփուած է Մեսրոպին գրթական գործանեւութեան զնանաւութիւնը. Հկարգեցան վազվազակի յայնմանէ գործոցը հօտին ուսմանց, բազմացան գառք գըլաց:

Տառ անդ արուեստը այդ դպրոցներուն մէջ անշուշտ յաւնարէն լեզուին, որ ձև և առ փոխ ուսուա հայերէն զըսուը լեզուին: Անուրանալի ազգեցութիւն մը, պիտունի և բարերար նոյն իսկ, որ սակայն ճայրայեղութեան արուելով յետոյ յառաջ բերու յաւնարէնը ընդորինակելու մալութիւն մը որ հելլենարանական համարտութիւններով ոյնանդակեց ևայ լեզուն, ինչպէս կը սկսունք Միւնեաց դպրոցին մէջ, Դաւիթ Անյազբի իրթնարանութիւններու, Միւնեցի Մագուս Քերթաղի ՊՊառայից նիրգին Սակփանոս Միւնեցոյ Թաղացութեան, և մինչէ իսկ ժԱ. զարու Դր. Մազիսորսի զըսութեանց մէջ, Բայց ի վերջոյ ևայ լեզուին առաջ արմատը յաղթեց սուր ունի այդ մերժերուն և քանի մը գարերու ընթացքին յաւնարէնին իրացաւց միայն որքոն որ կը յարմարեր իր ասրբերուն, և Թաղացու սակաւ զանի հանց իրմէ:

Այդ դպրոցներուն մէջ կար նոյն իսկ քերտանութեան ուսում, նախ թարգմանութեամբ Թիւնիւսոս Թրակեցւոյ, յետոյ մեկնութիւններով Դաւիթ Անյազբի, Սովուն Թերթաղի և այլոց: Առևուցուեր նաև հանտուրաթիւն, կարեւորազոյնը այն առանձներու յաւնական ուսմանց առարկաներուն: Կորիւն կը վկայէ թէ Մեսրոպի աշտերաներուն բալորն ալ հնահարարանած են: Նոյնու ուսման մաս կը կողմէր երաժշտութիւնը:

Առջին հանանաւը այդ դպրոցներուն գլխաւը գերը եղաւ,

Օքանի

Առանկ Ապրուս  
Դամիր — Մար-

առայն, քրիստոնեաւթեան ուսուցումը ճազավուրդի լայն իտուերուն, գրիստոնեաւթիւնը նոր աշխարհայեաց և նոր մատոյթ մըն եր, չոր ճազավուրդին մէջ արտօնելու նոմար, եկեղեցոյ կողքին, չոս մէջ գեր կատարեց զգուցը. Արդեն եկեղեցւոյ զերն ալ, եթէ զերլուծն ուզենց, առաջին այդ տարերւուն, ինչպէս այլուր, հայոց մէջ եւս ուրիշ բան լեզու այլ ուսուցչութիւն նոր կրօնցի. Մինչի որ ներանու ճազավուրդ մը քահեց իր կապերը կրոնի պաշտամունքն և զարձան նորավ քրիստոնեայ, եկեղեցի և զգուց կոչք կոչքի նոյն գրական նպատակին նախայցին:

Առ այդ կանոնաւոր գրիստութիւնն եր որ առաւ առաջն արի ան-  
րանդ մը, քրիստոնեական առաջինութեանց լայն բարձր օրինակնե-  
րով, որոնց թիւը մահաւանդ ուշնուական գառան մէջ անհետն լեր  
երթեց. Ասկուրտին բարեկարծութիւնների զառ, ճազեցն հայոց  
աշխարդի ուշնուական գառան մէջ գիւղազեական նկարագիրներ, ինչ-  
պէս Մամրիւնեան ուսմին քանիցը, Մաւչէ, Մանուկ, Վարդան և  
Զաւան, որոնց նկարագրի բարձրութիւնը և առաջնուական ոչին միշտ  
և ամազանասիան նեաց իրենց քաջանական և այժին. Այ կարելի ա-  
նունավ համբեկ բալոր զանոնք որոնց զգինեալը և առաւարտեալը,  
ուսոր շնդ մէջ և զանոնի ի ձեռին, զանցան զգինու հոգավզ և հայ-  
րենից ու հուսացը զալուպունեցին զարերով. Այդ ոչին և արիու-  
թիւնը ներշնչացն եր առաջնուարար հայ եկեղեցին և հայ զգրոցը.

Բայց գուգայ անկումը. Ոսկի այդ գրութեան վերը, վերաբի  
հը շիշի հայ զգրոցին լուսը, առաւելուպե՞ ի հարեւն քաջանական  
պատճենարով. Հյուսարութիւն վարութիւն զառաց, և անթիւն-  
գութիւն առակաց, առանձ քաղաքաց և քանդալն ամրացցաց, (Խոր.  
3. 4շ). Այնքան էր մուգուի զգրոցը, որ նիրակեցն որպէս, եօթե-  
րորդ ամենըրդ զարուն, ընդհանուր անհորրերութիւն մը արած-  
ուած է նորին ուսմուն հանդեպ, որոն համար զանձորին կը զակա-  
տի սասր աշխարհների զալոր թիւն հայ զիտունը. Ամրու Բարդա-  
տունի էր հանդիպի նոյն իսկ անց մը ուր զվեզու խօրինց մաս-  
սն, և զորութիւն նուազեալ է.

Արարտին արշաւացներու նեղեղին աւաւեցան լինելեցաւ,  
հայ արտեսորին և նարաւարպեաւթեան նեա, նոյն հայ զգրոցը:  
Երեթէ երկու զար ոչ մէկ յիշտակաւթիւն կառացաւմի մը. Բարդա-  
տունի թագաւորչներ ալ, պատերազմներով զրաւաւած միշտ, չկըցան  
միոց զարենի ճազավուրդին մուսուր զարգացման զարձին. Արծրու-  
նից զրաւանքի կաթողներ կանդեցին, ուսմունեց շինեցին, զանցե-  
րու ոչնեցին, բայց մասամբ զարոց լինելու մասին, Երիգոր Մա-  
տուարու, մի. զարուն էր իիշի հայ զգրոցներ, բայց բազմաւելով  
զանոնց ուրիշ ոզգերու զորութեան նեա, կ'ափառայ որ մերինները  
հիազացեալ են ուսմուն մէջ, ժամանակից փախած է հայ ճազավուրդին  
մասունք ու հայեցցաց. ցեղային զարձնապաշտ միոց մէկոյի ըրտ  
է նորին ուսումնական ձգումը:

Անկէ ետքը, երբ հայ քաղաքական և հայրապետական կեղրան-  
ներու փախարքութեան նեա ուղեկից նիւիկիս, որ երկեց լոր զար  
հայ մշտիւմի կեղրան եղաւ և մահաւանդ փայլեցաւ հայ արտեսորի,  
երածաւութեան և մահաւանդարլութեան մէջ, չենց հանդիպից հոն ալ  
հանոնաւոր գրական դրսութեան մը, թէն կայ առանձնական ուսու-

տում, որ կը զարգանայ նուրբինեաց օրով. Շերհալին կը դրէ մերտա ռասութեանց մանկանց, բայց և յիշեր զգըց. Լեռն ՞. որ կուրինեան առն ամենէն ռասութեանց եղաւ, անած Զաղել առաջին Բագաւեայք ճանկերուն ապչ, մէջ. զարու վերջեց Մեծ թար կուլուած մենասանին մէջ կը կանգնէ մասն վարժապետաց. բայց չենք դիմու թէ կը անել. Յաշորդ զարու առաջին քառորդին նման փարձի մը կը կանգիպինց լեռն ՞. ի. կազմէ ուրի տեղ մը. Այս շարժամաները ցոյց կուտան որ սկսած է վերաբին արթնաւ հայ միացը ուսման պէտքին ապչի. Բայց անկէ հաղիւ կէս զար վերջէ կործանեցաւ նաև նուրինեանց զաւը, անոր հան անեսացաւ նաև ողջացին գրթաւթեան կազմակերպեալ որ և է զրութիւն. Դերի մազդուրդ մը չէր հենու ոչաս ուսման պիտին մը պահել.

Միիթար Դուի Դատաստանագրքին այս գլուխը, Թաղադր գոռաւաց մանկանց ռասուցաց, որ կը յանձնարարէ որ տօն է զարս վարձու զմանկանց ռասուցանելց, պէտք չէ կարծարի թէ նաև բայցին ձրի ուսման յարգոր կուտայ. Այս պարզապէտ ուսմանին ռասուցան կատարացներու կը վերաբերի. Կազմակերպեալ զգըցի մը ոկնարկութիւն չի կայ առանց մէջ, Երբեմն, կ'ըսէ, ըստ յաժարութեան, ձնող ընծայ ռասուցաց առն, ինչ որ առիլի կը յայտնէ թէ առնին ուսուցման զրութիւն մը կայ այս մամակիներ, բայց չէս կոնժնաւոր կրթական զրութիւն:

#### ԱՊՏԱՆԻ ԴԱՍՏԱԱՐԱԿՈՒԹԻՒՆ. —

Ազգային կամ հասարակուան զգրութիւնը թէն չառ կար առեցին և յետոյ ու ցոնցաւ Թացին, քաղաքական գէղցերու հետանիցավ, միջին զարերու ընթացցին ռասուց շարժանակաւցաւ ուրի քանի մը ճեւերու մէջ, միջին որ մէջ. զարերուն վերաբին կոնդնեցաւ կազմակերպեալ ուսման զրութիւնը. Հետաքրքրական են այս բայցը ճեւերու ուշ, Խօսինք անոնց մասին կարգաւ.

Խօսնցնէ ուսմին յիշաստակութեան որժանի և ուսմին զարարակաւթեան զրութիւնը, որ մանաւանդ ոչնուական զաւակորդին մէջ Թաց միակ կերպոց կրթաւթեան. Յայտնի նախարարներու առն կամ գէղեակիներու մէջ մասնաւոր զաւակորակիներու ճեւցին ունի հայ պատուիներու կը սառնային մամանակին ունային կրթաւթիւնը, որ առուելապէտ առզմական զրութիւնն և մարմակը մանցի մէջ կը բազմնակուէր. Դարերով ամրոզի նրանույի զրութիւնը եղաւ այս. ընարանին իր զաւին ռասուց կուտայ մասնաւոր զաւակորակիներու ճեւցավ. Այս կերպոց զրութիւն աներ նոյնիսկ երբ կային հասարակաց զգըցներ.

Ազգաւականերու կրթաւթիւնը, որուն կազմառն է մեր ազգային կեանքի ուզզաւթիւնը և նախառադիրը, ի հարկէ ամենէն աւելի ու շաղրաւթիւն պահանջազ ռասութեամբեան նիւթ մըն է. բայց գերախոսարու քիչ են, չսու քիչ, մանրամասն յիշաստակութիւններ այս մասին:

Ազնուականի մանսէց դայեակէն վերջ կը յանձնաւէր զաւակորակին կամ ճանկավարժ զաւակորակին. Սո կը բնակէր մանկան ձնոցաց առն մէջ, և կը զարզէր ազուն կրթաւթեամբ. Այս զրութեան մէկ իսկաւն է, որինակ, զար ժ. ժ. Բայս ընդզատն է իր ենիլով:

հանումին կը սկսեր այդ գառափարութիւնը, ինչպես կը մէւ Արքան նրգիւացին, անշատ յարձաւ եօթն ամս լինի, յառաջն առըն. Մանկան կը բարիւնը մէրզի կը յանձնեաւ գառափարա. ինչ, անոր նիս ու կայսը, դրազումը, զրասնեցը: Տան հայրը զրա. րան ըլլաւով քաղաքական և ընկերացին հոգերով, չեր սառնեներ ուղար գառափարութեան և կողովորիւն ուլ: Նոյն իսկ զայն մա. տեկից լըներ իր հրատերենքուն կամ զրասնեներուն:

Տան մայրը և միայն որ կը նոկտ աղօս գառափարութեան զր. գին, Մամիկոնեանց առմին միկինեներ նշանաւոր եղան ընտանիկան գառափարական մէջ: Այդ արդարուներէն են Տիրին Զուրի, գին Վարդունի Եղբայր Հայեակ Մամիկոնեանի և մայր Վաւանի, որոն Համար կը վկայէ Ղազար Փարզեցին: Այդ գին անուանի և առա. նեկաւ անենայն լու և մասուր մասուրք յանձնայն կոնյար ի հա. յառան աշխարհին, որ սեսյո և խրանեաց զորդին իւրէ: (7. 4ր): Նու Փառնենեմ Թագուհին, որ կը հանեմ իր Պապ զաւին ընթա. ցին... կը իւրատ կը յանդիմանէ զայն, մինչ Հայրն Արշակ ՀԵՊՐԱ. զիր անոնց բառ:

Մանաւունք առ անդրբանի զաւանիերը առարկայ ին ուշագիր գառափարութեան: Այս ուշագրաւթիւնը մասնաւորապէս երր խըն. դիրը իշխանութիւն կամ արքայորդի մասինէ: Կիլիկեան լըջանի բար. քրիեն և ամբողջացին կը դրէ: Բժ արքայորդին կը պահուի զաւասի և զաղարապէն իշխանին հրամանին ներքին, որ միանդամոյն անոր գառափարին է: Մամիկոնեան առեն զրազում անի կենդանիներ, որոսին ինորակներ և բազեներ ինումել: Յետոյ, և առցենու կը բարձրանայ իր կը բարիւնը, եւրօպուն այդ ժամանակներու առ. պեսակն զրաբեն նաևն: Նախ կը նոյի սրբէ իշխաններուն: ողոյ Հեղուարքներից ԿԵՍԱՅ, յետոյ ապաստոր բանակի նորա: Ազա հասաւ անեկով կը զանայ միիւնոր և անկ վերը կը մանէ իշխանաց կարգը: Կամ ըստ անի կանխազոյն սպազութեան, զաւանին կը հուսուե նախ ՇԽեզունէ, յետոյ ԱՌԱՋ Սեպունէ:

Ուսումը կը կեցրունար ընդհանուր քաղաքավարութեան կա. նենեներու, քաղաքական կենարի ծանօթաւթեանց, մանուսնի մարմ. նառոր կը բարիւնը և մաքուր Հայրենասիրութեան զաղափարներուն լուրջ: Հայեր շատ կարեւոր անզ կուտային մարմանիրանը, թէն Հայոցներու համար մասյին զրայրը հուսային նաև զիր և այլ ուսումնեց: Միշին զարերուն մէջ, երբ Երիսունեսին զարդարե. ութեանց ևս առան զաւ Հայեցողական և իմաստաւրական ուսումներ զրաքաց մարգաց միացեր, հուսզեցաւ նաև մարմա. կը բարիւն կարեւութիւնը: բայց առևարանի բայց զարերուն, և մանուսն նախին լըջանեներուն, Հայերու մաս մարմանի առաքինութեանց մշակումը կը բարիւնը գլուխաւոր նպաստէն էր: Այդ առաքինութեանց միանալով Հայրենասիրական և քրիստոնէական ուսուցինութիւններ ուսին մեր նախեաց պանձալի սերունդներ: Անբառ Պատմիլ, վկայելու առեն Մամիկոնեան Համազապի մասին թէ նախբռուն էր զրց առման: Առէնորդէն շատ յանկենասիան կերպով թէ ան չէր հանեան իր առմին սպազութեան որ էր ցին. արտիս վարժութիւնն: Արքէն ևս աղևանական առմին կը բար. թեան առնեցն եր մարզական վարժութիւնը: Աւ երբ նկատ ա-

ՆԵՆՅ ՀԱՅ ՊԱՌԻՀՆԵՐՈՅ ԱԿՆԱՐԿԱՆՄԻՒՆՆԵՐԸ ԲԵ ՀԱՅԵՐ ՀԵՒՆ ՀԱՅ  
ՄԻՐԵՐ ՎԵՐԱՊԵՏԱՆ ԱԽԱՆԾԵԾ, և ԸՆԴՀԱԿԱՆԱԾԸ ԵՐՐ ԱԽՆԵՆՆԵՐ ԲԵ ԱՌ-  
ՋԱՆ ԴՐԱՄԱՆԻ ՀԱՅ ՀԱՅ ՉԱԼԱՐԱՐԵՆՄԻՒՆԵՐԸ, ԻՐԱՎՈՆՆԵՐ ՎԱՆՆԵՆՆԵՐԸ  
ԵՎՐԱԿԱՑՆԵՐԸ, ԲԵ ՀԱՅԵՐ ԿՐԹԱ-ԲԵՆ ԳՐԻՎՈՎՈՐ ԻՄԱՄԵՐ ԿԵ ԱԽՆԵՐԻՆ  
ՀԱՅՐԵՆԻՔՅԻ ՀԱՄԱՐ ՊԲՆԱՆԱՐ ՊԱՄՐԱՊԱՆԵՐԸ ԱԵԼ.

ՊԱՍԱՆԻՆ ԿԵ ԱԿԱԵՐ ՊԱՆԱՂԱՆ ԲԱՂԵՐ ԱՌՎԻԼ, յեայ առելի լուրջ  
մարզանցներ և Հրաւանդներ կը հասարեր, պրոնց կարգ և խասա-  
բերութիւն կը պահանջէին, ինչպէս ձիվարժութիւն, աղեղնաւ-  
րութիւն, բանամարտութիւն, ուսւերածութիւն, աէդշնկեցութիւն,  
գիւ արձակէլ, օրս, եւայլին, Խորենացին յիշեւու ոտեն թե ինպիսի  
քաջ մարզիկ մըն էր Վարազզաս — ՅԵԽՈՎՃ մանուկ, որուայ, ուժեղ,  
իւ ամենայն գործազք արութեան, և յայդ կորպի Նետանցութեամբ  
(Դ. Ե.) — կը թուէ մարզանցներ պրոնց մէջ քու կը հանդիսաւոյին  
Հայեր. Այդ յատկաւթիւնները մասնաւոր զատիփարակութեան ար-  
դիւն էին.

Հայ երիտասարդաւթեան մարզական կորպւ կը հանդիսաւորուէր  
առնեան առիթներով. Ամէն Նաւասարդին կը սուբճէին, այլ իրախ-  
անաւորեանց նետ, նաև մարզական բաղեր, նման կին նելլենացւոց  
Ողիմպիսկաններուն, պրոնց եօթ որ կը առելին և պրոնց ներկայ  
ԿՇԱՍՏՐԻՆ թագաւորն իր բանակով և կորպազիւն իր եղիսկապու-  
ներով.

Հայ իշխոնաց առներ եղան նաև մշակոյթի հեղթաններ. Հայ  
իշխոններ ոչ միայն իրենց զաւակներու կրթութեան հոգ կը առնելին  
վերը յիշուած ենուզ, այլ նուի յաւախ իրենց զալատներուն մէջ կը  
հաւաքէին ողաք և մասնաւոր զատիփարակի ձեռցին ոտկ կը հը-  
քէին զանմեց, թեն այս ուսումը առանձնաշնորհում մըն էր միայն  
շնորհեալ զատիփարակի զաւակներուն համար. Բազրասունից մաս-  
անդ, թ. մ. գորերուն, լատ նշանաւոր եղան առանին բարձր  
ուսումն մէջ. Արքունեաց մէջ կը պատէին ժերանց ալ, որ է մասն-  
ակարան. Նոյնպէս առանմը բարձր էր Պահլաւունի առմին մէջ,  
պրոնցմէն Գրիգոր Մագիստրոս էր Անյոյ իմաստուն և հանճարեղ, զարձ-  
եալ ի մասնիկան արց հայկան և յանական գործութեամբ. Նոյն-  
պէս նոյն առմին Գրիգոր Վեպյանէր Պահլաւունի, և Ներսէ Լամբ-  
րդուացին որ իր մօր լանցով ուսու յաւարենը. Եղիկեան նուրին-  
եան իշխոնաց մէջ եւս զարուար եղաւ առանին առմային զատիփա-  
րակութիւնը, պրոնցմէն ներսէ թ. ՅԵԽՈՎՃ պրոց կրթեալ էր, և  
կեսն Դ. եղաւ մէկնեաւ ուսման.

Առանին զատիփարակութեան մէջ առկ առնէր նաև աղջկանց կը-  
թութիւնը. Թեն աղջկանց չէր արտած ընկերույին հետեւցի լոյնորէն  
մասնակցելու իրաւունքը, մարզանց ընկելու ինչպէս կին Սպարա-  
ւունէր, անուց հենցուղը իւ էր փափկութեամբ, բայց զուրկ չէին եր-  
բեք գրադիտառութեան. Եղիկէ կը գիւրէ թե ինչ կը հանճայ հիւզ  
Հարիւրի չափ յականէ յանաւունէ սինաւոյց պրոնց Անդուս կը մըր-  
մշնէին միիթարուելու համար իրենց նեղութեան մէջ և ըշնրե-  
ցուածք մարզարեին հոներին. Ուրեմն ուսեալ էին.

Անոնց մէջ կը հանդիպուց, ոչ միայն իրենց զաւակներուն ու-  
սում առազններու, այլ նոյն իսկ առանին սասացյաւիններու. Սա-  
հակարակ Սիւնեցի թէ երածշառաւթիւն կ'սասացունէր, թէ ուշուով

բանառուեղծ էր որ Հքաղցը եղանակաւ մեղեդիներ յօրինեց որոնցմէ մին Ալբրեհ Մարտին։ Յաջաւննես կաթողիկոս էր գրոս մէջ և Հայուն Սիհնեաց Սմբատ իշխանին պէտքմաս մայրը։ Արքունիւնաց մէջ Հայփոխմէ Տիկին անզամ մը Պատրամաւոր կը զրիսի Բարձոյի։ Դիլիխոյ մէջ Աւին Տարսոնցի կոյսը էր գուշացիր յօյժ հայուն, այսիցն լու գեղացիր գըլապըստիւն դիմեր։ Հ. Ալիշան իր Սիհնեանին մէջ, Խօսելով Ռաւրինեանց լրջանի մաւոր զարգացման վրայ, Գրոտ Հային կանայք եւս գրեին և ընթեռնուին, և Կը յիշէ Բարձրքի Կառանդին քանանցի գուստը Զողել որ զպաշտէր զմանը ուստանա, և էր հայուն ընթերքըստիւթեան և արքունուին գըլամիւնն։

Աւ պրազիւն գիտենք որ կանանց յառակ գպրցներ էնյին, յիշեալ այս և ուրիշ նման ուստաւ կանայք պէտք է ուրգման ըլլան իրենց ուսումը առանձին զատարարակութեամբ։

#### ՍԱՆ ԿԱՄ ՑԵՐՆԱԾՈՑԻՆ. —

Խոյսի աշկերտը արհեստաւոր վարդեաին քով, Խոյնուի ձեռնառունց մասաւորականն վարդեաին քով, Հայեր եւս ազգութիւնն աւնեին իրը ուն ունել իրենց քով պատանի մը և հայել անոր հըրթաքեան, միանգամայն ճառայեցնելով զայն իրեն, մինչ որ ան մեծնոր և հանելը ձեռնադրութեան առարկանին։ Այսպէս Գշներին մանաւանց կոյսիսպասներ և վարդապետներ, Այսպիսի պատանիներ Գը կոչուեին ձեռնառունց, որ Կը նշանակէ իր ձեռքին ասկ անաձ։

Հինէն ի վեր շատ են օրինակները այս գրութեամբ ուսում առած անուանին հեկեցնականները և մասնաւորակներուն։ Ներսէ Մեծ Խոյրպետ մեռնառունց մը աւնելը Խոր անուն, որուն յայոյ յանձնեց իր Հիման բարեկիրական հաստատաւորաթեանց մասաւորակութիւնը, և յեայ երր ինք Արեւմուտք պիտի համբարդէր, զայն կոյսիսպաս ձեռնադրեց և անզակալ կարգեց։ Խոյնու Ս. Սեպուոց ձեռնառունն էր անոր, զնենու և ուստաւ ու Մեծն ներսէին, որուն կը պարտէր իր Անլեռազիտութիւնը։

Ս. Սունակ եւս ունելը ձեռնառունն առուստամատէր պաշտանեայու, որոնց անոր մանաւան մամանակ հանգիստի կը գնեն անոր մարմինը, Չազար Թարգեցի հոս կը Խօսի ինցն իր մասին, թէ էր զնենու և ուստաւ ու ոս Աղան Արքունուայ։ Խոյնու Յազւն իմաստակը հայրապետ, մին հայ մասնեազրութեան չողլուզն առաջերին, ձեռնառուն էր Թերզուոց Քրթենաւորի, որ երբէ անհնազանդ կամ ճայլ դաներ իր անը՝ զայն ուղղութեան կը բնիւր հիւզանց սիրոյ իւրայ։

Խոյն իսկ քանանց Հայեր երրենք ունեցան իրենց ձեռնառունները։ Ժ. զարու յիշասակուդիւ մը Կ'ընզորինակէ Խոր Կատկարան մը Առուստամատէր անուն քանանցի մը համար, Հանգերը ձեռնառուն իր հարգան պատանիսվ Խալաւորի։

Ձեռնառուններու զատարարակութեան մասին շատ գեղեցիկ է։ Հանգերը մը ուսում է Սիհնեաց Առաքել Սպիտակոս, որ յեայ մէ։ զարուն սիկընները Դիլիխոյ Արքոց հոսուու։ Ան կ'ուուցիր որ բալոր քանանցները զայն մեռնառուններ, որոնց վարժուին քանանցութեան զաշտանին, որդեպի ազեւ լինան ձեռնադրեալներ։ Սարդը բաժն է ընսմանազրութիւն զատարարակութեան մանկանց, մանա-

սորոգեա հոգեւոր կոլման նետեւղներուն յարմաք, բայց լու զաշա-  
փար կուռայ ընդհանուր ուսմանց ուղղաւթեան մասին ալ:

Մանկաւթեան լրջանին, կը ըստ, ձևով կը դաստիարակեն մահա-  
կը սորոգեա զայեակ և պատուարք Առումայ երկիւզին մէջ, եթի լե-  
զուն բացարի, և այս ուղիմել կը սորզեցնեն, եթի խելամաի, ունոր  
այց կուռան երկինքը և ասողերը, ծանօթացնելու համար Արարի-  
ւը: Յետոյ կուռացանեն Ս. Երրորդաւթեան երկուրզը: Ապա, ժամեր-  
գութիւնը, Ս. Դատարագ, բարոյիսին առաքելութիւններ, կը յիշեց-  
նեն մաւր և մարգան վախիւնը: Եօթ առեկանին, կը հուրիւն  
զայն եկեղեցայն: Զաւունուն մար կը միսի ուսուցանել զերազոյն  
դիմութիւնները, հաւուց, վարչ և արք և մարտիրոսց, դաւից, ա-  
զումք, ճամփաւութիւն են: Ելն: Իսկ երեսուն առեկանին կը գու-  
գունին եւելագործիւն:

Ուսման այս գերզին մէջ քիչ ուղի ունի մասենազրական և  
դիտական ուսումն: Նպաստից զաւ եկեղեցական ուսումն է: Այս գը-  
րութեան մեծագոյն զերը եղաւ, անուագիւյ, կանոնաւոր ուսման  
գրութեան լուսութեան զարերուն, ևայ ուսման կայձերը Փախուցել  
միացե միաց, մահուանդ եկեղեցական զառուն մէջ, անհասական  
միջոցներով: Յետոյ այս զրութեանն է որ յառաջացաւ առանձնական  
ուսմանց այն զրութիւնը: Որպէս ժամանակին ուսեւլ մարզիկ իրենց  
շուրջ կը հաւաքեին պատանիներ և անոնց կը սորզեցնեն ինչ որ ի-  
րենց գիտեին: Իսկ գորզին պիսի խօսինք այդ մասին եւս:

#### ՎԱԼԱԿԱՆ ԴՐԱՅՑՆԵՐ.—

Հանրային զարժարաններու փակածով, և առանին զատարա-  
կաւթեան աւանաւութիւննով, առրիներու ընթացքին կը թութիւ-  
նը ամփոփաւեցաւ զանցերու մէջ:

Վանցերը, ինչպէս բոլոր աշխարհին մէջ, ևայց մէջ եւս եղան  
աշխարհի հեղործները: Անոնց մէջ պահպանեցաւ ևայ մաքին առ-  
կայէ լսէն, անոնց մէջ ընդորիկաւեցան առ հարիւր հազար գրչա-  
գիր Աւետարաններ, Առուածալունի զերգեր, Ժամազրցեր և զառ-  
կան զերգեր, ևս պահպանեցան ևայ երաժշտութեան արաւետց,  
մանրանկարչութիւնը, և ի վերջոյ իրենցմէ եր որ, Նոր զարերու  
մարտնութեանց, Շնորհաններու և զորքեզոնքներու վերածուած,  
ձևու նոր թափը ևայ զորքութեան և մշակութի:

Թաշացական աւեկանութեանց և աշխարհիկ հետաքի աւերակին-  
րու այդ զարերուն մէջ, լսու մը բարեկալու հոգիներ զանցերու  
մէջ զառն սփոփի անշարժութիւն և ապրեցան հոգիկան զմայլման  
կաներ, զար զրի վերածեցին: Մանաւանդ մաքի մշակներ ևս ա-  
սիր զառն աշխատանքի: Հ. Դարդ. Զարրաւանական կը գրէ: Վան-  
ցերը և՛լ լսէ ևսկ հանգստարանց երին և զիւր օրսի, այլ նուն մասց զա-  
զեցի զառշաւոր աւանդապուր երին անցելոյն գիտութեան և զա-  
տակաց... ևս յանախ նաև մերձաւոր զերզից և քաղաքց մանկ-  
ուին իր ուսումն և զատիարակութիւնը կ'ընդունէր: (Բ. 185).

Զարերու աւերը անոնց մէջ ալ զարժարաւու, և լսու վանցերուն  
նիւթական լինուածքին հետ կարծանեցաւ նուն անոնց մէջ պա-  
զանաւած բարեկալութիւնը և ուսումն: Սակայն անոնց աւերա-  
կաւթեան մէջն ալ կը խօսի մեզի փառաւոր ունցել մը:

Բաղմաբիւ էին այլ մշտականի գեղրանները և յայտառնի ամէն կողմէց, Միայն ժն. գործն, քաղելով զանազան յէլառակարեններէ, և Զարդանալեան հը յիշէ իրենց անձներով 72 զանցեր, իսկ առջի ամրազական ցաւցակի մը մէջ կուտայ 25 զանցերու անձնեները: Առաջնու զայ հը յիշտառիւնի նաև ևայ զանցեր Արեւածաւցի ևայ զազթավայրերու մէջ, որոնցը ևայ նեւոնդ Այլուն հը յիշտառէ (Սիստեմ 372) իրենց անձնութ և Բաւտիստով 29 զանց, ևսզմ, Գուախի, Ֆենով, Թուոււ, Ափզ, Միւն, Լաֆուի, Վենեսարի և աւ. Յ հաւը ժն. գործն, 14 հաւը ժն. գործն:

Նշանաւոր հանդիսացան քանի մը հաւը, որժանի մասնաւոր յիշտառիւններ:

Սիստեմ Արքի վամին կամ Վարդապետարաններ, որոնց դիտականներն հը հաւատան Մինենց զամանի Օրբելիան: Հն ուստ էն Սականան Մինենցին Նշանաւոր չեղաւարան, և Կամբառ Կաբաղ, ի կղրորորդին Թեղարարու, որ հաւատ էն գլուխ կատարեալ զարդարեանց: Արշակունից գուապին մէջ, և. գործն, կար վարդապետարան մը, յեայ Վարդին Հայր Գոււուած, յայրում մարզիկաւ էին ման կունք նարաւար և դիտունց հայրց, (Օրբ.):

Ցարի վամին Մինենցին մէջ, միշին գործ ամեննեն ճանօթներէն մը, որ 500ի չսփ զանականներ կային ուստ մը: Հն հը մշտական երգեցզութիւն, Վարդապետական ուստունց, Նկարչութիւն և Պրութիւն: Անգի էն Յազնան Որոտնեցի, Քրիզոր Ցորեւացի մէջ Առաւարան, և Թօվան Մեծագուցի Նշանաւոր մատենագիր: Այս վանցը մէջ ամրց եղաւ Անդիբորներու ուսուր շարժաւմին գեմ, ուսյացրելով անցն թերաք ուստունական զենցերով ինչ ու:

Նատենա վամին ժ. գործն Աշոտունեաց զաւարին մէջ, գրազմացրդ զաւանապայծան երգեցզուզք և զրոկն դիտուցը: Հն զարդացաւ Անանիս Վարդապետ, Վազգենարդ և մատզարդ Փիլիսոփար, որ ուսուցին եղաւ մեր էին մատենագրութեան եղական զենցերն Քրիզոր Նարեկացը:

Ժթ. գործն երեւելի հանդիսացան Հաղարծին Մեծաստանի, առաջնորդութեամբ Խայտաւոր Տարօնեցւոյ, որ Եր պդիաւթեամբ Հայեալ, մանաւանդ յերաժշտական արևետունին: Խոյն գործն մէջ Հայրաց առաւ և մեր ազգին Յազնաննեն Գետարանը որուն աշակերտ Եր Սամանէ Անեցի Ճամանակադիրը, Ցիշներ նաև Միիթար Գոյշ հիմնած Գերի Վամին, որ Հայեր, արգել Վարդապետ, ճամեկնելով իրենց առինանց, Հրազդարուած անոր բազմարգիւն ուսումնէն, կուզային չի կարդի աւտիերաց կոլոզ ուսունէին ի նմանէն: Հն կրթուած նն կիրաւած և Վարդուն զայ Վատահիւներ:

Կիրիկիոյ Նշանաւոր Վարդապետարանն եր Հնանկայ, Ան Անան Սեւաստունը, որ Հայկական ուսումն հը բարձրաւար Ճամանակի երգազական ուսումն առայնանին, Հն հը գործէր Գրիգոր Վայուտէր մէջ կաթողիկոս, զար հը զրուտ Շնորհալին: Հն ուսուց նաև Վերարուն Ստեփանոս Վարդապետ, Հն վերջապէս իր ուսումն առանց ներսէն Շնորհալին, լոյսի անհման երգիւը: Հն կ'այցելէ նաև Միիթար Գոյշ, ճամեկնելով իր առայնանը (ինչպէս արքիներ իրեն կ'ըներին) և քաջանած ինչ ոգունու ի հայունն կ'անցնի նորին: Այնուշ մատաւանդ զարդացաւ գեղադիր մանրանկարլութեան և երածշատութեան արևետուր:

Նշանաւոր էր նաև Կիլիկիոյ Սկելայ Վանից, Տարսունէն վեր՝ Համբրունի բնացին մատ, որը յիշառագիտներ էան Օլխն Հեթում Թաղաւորներէն։ Անկէ եւան Նշանաւոր Անդիխակ Դրիգոր Սկելառացին, և Դեսր Սկելառացի, Շնորհաց վարչա գերտը տրուց, որ գեղադիր զարդացիր էր, միանկամայն յաւնաբան։ զինք եւան ուղեկից ըստ Համբրունացին, երբ ու իրը պատուիրուկ կը զբկուեր գերման կայսեր։ Անկէ ե նաև մեծ Լամբրունացին պայտապացեալ գիտութեամբ իրու զարդացին։

Ցիլենց նաև Բաղեշի մատ Ամենուր վանիր, մէն դարսէն, որ երրեմն Յնաղելի Համալսարանը կ'անձաւնաւի։ Հան մշտական Առար Դրոց ուսում և իմաստագիտութիւն։

Պարզ կենցազ կը վարեին այս վանցերուն մէջ և ամանակին մեծ մարը կուտայիր հոգեւոր ու մատար զարդացման։ Ուսուցիչներ վարդապետ տիտղոսը ունեին, Առաւոնէին քրիստոնէական հուսաւոյ հրմէրը։ Սաղմանները գոյց ի բերան գիտեին։ Ասիկ զարտաւորիչ էր մանաւանդ յանձնայից համար. զանցառուները կը յանցի մանէ Շնորհային իր Ընդհանրականին մէջ, թէ առանց 150 Սաղմանները կանխու գոյց զիտնաւու Ս. Պատրոք լի մատուցուիր։ Կուտայէին նաև Հնորհապատճենութիւնն կամ Հնորհառութիւնն, այդ ժամանակ ներս գիտաւոր նիւթը, և սփիրիտափայտութիւն։ Եսա զօրաւոր էր ժամանակ մը քրիստոնէաւթեան ուսումը, յետոյ շինու լեզուադիտութեան նեա, Կուտայէին նաև քերթուզութեան և երաժշտութիւն, անդրածնէն պաշտամանց պայտառութեան համար, որոնց զարդացման պայտացին առինց ներշնչեալ շարտահաններու և եկեղեցւոյ զմայիլի երգեցազութեանց մէջ, Կիլիկիոյ շրջանին մէջ մանաւանդ, շփում ունենալով Սարոպայի Վներածնունդին արտեստներուն նեա, զարդացան երաժշտութիւն, նկորչութիւն, մանրանկարչութիւն, զարդապրլութիւն և նոյն իոկ պարզ գրւութիւնը, այսինքն լու ձեռադիրներ ընդուրինակիւնը արտեստը, որ իր զարդառութեան մէջ իոկ է ու զանանչին բաւական արտեստ։

ԿԱՐ Ա. ԶՈՐԵԱՆԻ

ԲԻԼՋԱՆԴ ԿՈՇԴՄԱՆՆԵԱՆ նկարիչն արժանիքներէն մէկն է այն որ զեր ուսանողական շրջանին իսկ չ'ենթարկուելով ակադեմական լուսին, իր որոնութեամբ սկսած է ընել արդիապաշտ զպրոցի ուղղութեամբ։ Երկու տարի է կը զրկէ իր գործերը «Սալոն» տիւ։ Թէրև։ Անոր ներկայացուցած Փիկիւրները՝ զիմանկար թէ քոմբոզիսին, իրենց ծանր զանգուածներուն մէջ կը կրեն ողբերգուկան արտայարութիւն մը։ կենաքի ու ճակատագրի հարուածներուն տակ կործեն շշմոծ, անզգայացած տիպարներ ըլլան անոնք։ Ասկէ զատ, յօրինուածքի հաւասարակշութիւնը, ֆոներու

յոշող գիւտերը և մասնաւոր կարմիր գոյնի մը տիրտպետութիւնը կանաչներու հետ անհատական գրում մը կռա տան իր գործերուն:

ՊԱՐՈՒՅ ՊՈՐՏԻՉՈՎԵԱՆ կանոնաւոր ցուցադրող մըն էր ՇԱ-  
րու տիւ Թէրոխ մինչև 1935

թալականը, երբ ան, զեռ եւ-  
րիտասարդ, վախճանեցա-  
յանկարդ։ Այս տարւոյն ըս-  
կիզրը յետ մասու ցուցա-  
հանդէս մը կազմակերպեցին  
իր գործերուն մէկ ստուր  
ժառվը։

Արեւելքնան տիպտիներ և  
մանաւանդ։ Պալատկան տեսու-  
րաններ, փողոցի, որմարանի  
անկիւններ կը ներկայաց-  
նէին անանք, բոլորը՝ յախճա-  
պակեայ վաս և փայլուն գոյ-  
ներով, թանձր ներկերով և  
ջղուա ու հարտար ձեռքով  
մը լայնօրէն վրձինուած։

ԱԼԵՔՍՈՒՅՑ ՍԱՐՈՒԻԱՆ ա-  
ռանձին տեղ մը կը գրաւէ  
անշուշտ այս խումբին մէջ։  
Ան, կարելի է ըսել, հայ միակ  
իրական ծաղրանկարիչն է  
որ երգիծական բնածին յատկութիւններով սմասւած ըլլալով  
միասին գծագրական արտեստի թէքնիքին հետեւած ու տիրա-  
ցած է անոր՝ Վիեննայի մէջ։

Տարիներէ ի վեր կ'աշխատակցի եգիպտական մամուլին և իր  
սուր ու անխնայ քաղաքական ծաղրանկարներով մէծ համբաւի  
ու գնահատութեան արժանացած է արար և օսար շրջանակներու  
մէջ։ Կ'աշխատակցի երրեմն Ալբեւ օրոթերթին, ինչպէս նուև  
պատրաստած է ճոխ պատկերազարդումը Երուանդ Օտեանի օլն-  
կեր Փանչունիի առաքելութիւնը Մագլիմարի և Վասպու բականի  
մէջ գրքերուն, որոնք տպագրութեան կը սպասեն(\*)։

Այս անուններէն զատ կրնանք թուել նուև հետեւարները.



Մադիկներ


ԴԿԱՐ Ա. ԶՈՐԵԱՆԻ

(\*) Եր. Ա. Ալ. Սարուիանի վերջին 1937 Մարտի ցուցանամդիսին մասին  
ան մեր պահանջանքի բաժինը, հասունի վերջաւուրեան։

Տիկ. Ա. Չաղըր, Օր. Հ. Թարուելեան, Պ. Ա. Աղջարեան, որոնք  
հազիւ մէկ երկու անգամ հրապարակ ելած՝ կարծէց գործունէ-  
ութենէ դադրած են բոլորովին։ Յիշատակինք նաև Պ. Ա. Պատո-  
րիկը, որ մեկնեցաւ Սդիպասուէն քանի մը տարի առաջ։ Պ. Վ.  
Մանուվեան՝ որ Ե. Տէմիրճեանի հետ սորգած ցուցահանդէսին մէջ  
բերած էր պարզ և բնուկան ճշուաթեամբ նկարուուս տեսարան-  
ներ։ իսկ Պ. Ա. Սամանեան, Ա. Խօզզաթէւոն և Ժ. փալա-  
մուսեան նոր կը սկսին ցոյց տալ իրենց աշխատաւթիւններ։

\* \* \*

Ինչպէս կը տեսնուի «Սալօն» ախ. Թէրըը հաւաքական ամե-  
նէն կարեւոր ցուցահանդէսն է, ուր տարին անգամ մը հրապա-  
րակ կուգան Սդիպասուի ամէն ազդէ արուեստագէտներ։ Կատա-  
վարութիւնը յանուի գնումներ ու կը կատարէ հոնկէ՝ Գանիրէի  
«Musée d'Art Moderne»ին համար։ Կրնանք յիշատակել այսուղ  
թէ այդ թանգարանին մէջ դորժեր ունին հայեր ալ, ինչպէս Տիկ.  
Տ. Կամառական, Պ. Պ. Տ. Կարտապետեան, Պ. Պարտիզանեան և  
Օ. Ա. Կախիսեան։



Պ. Պատուարեան

ԱՐԴԱՆԱՐ Ա. ՍԱՐՈՒԱՆԻ

Անառասիկ տմիուի մէկ պատկերը Եգիպտոսի հայ արտևեստագէտներու գործունէութեան՝ առ վերջին տարիներու ընթացքին, ինչպէս նաև անոնց արուեստին գլխաւոր յատկանիշները։

Հաւաքական անուակէտով ի՞նչ արժէք կը ներկայացնեմ անոնց իրենց հայ ըլլալու հանգամանքնեւ զատ կայ զիրենք միացնող կոտ մը, հասարակուց ձգում մը, ազգային արուեստ մը սեղծնելու մտանութիւն մը....

Ո՞չ Առանձին անհատականութիւններ միայն, եւրոպական այս կամ այն քաղաքի մէջ իրենց ուսումը առած, առանձ կամ նուազ արժէք և ինքնառապութիւն ունեցող, այս կամ այն զպրոցին ներեսոց արուեստագէտներ, և այդքան....

Գաղութներու մէջ առկէ տարբեր իրականութիւն ալ կարելի չէ երեւակայել արգէն, կարծես....

Նիկոսիա, Դեկ. 1936.

ՕՆՆԻԿ ԱԻԵՑԻՍԵԱՆ



Յ. Պօլուսի

ԵԱՐՄԱՆԿԱՐ' ԱԼ. ՎԱՐՈՒՆԻԱՆ

## ՕՆՆԻԿ ԱՒԵՏԻՍԵԱՆ

ՕՅՖիկ Աւետիսեանի կողմէ ն-  
գիպօսնայ իր արուեստակիցնե-  
րում վրայ այս ճակիրն ակնարկը  
անկատ է: Նրիսասարդ նկարիչը՝  
հասկնալի համեստուքեամբ, մը՝  
զանց ըրած է իր իսկ մասին  
խօսիլ: Ամբողջացնե՞ն իր յօդ-  
ուածը:

Վիեննայի Կրաֆիդի Արուես-  
տերու պետական վարժարանը եւ  
ապա Հռոմի Գեղարվեստից պե-  
տական բարձրագոյն Ակադեմիա-  
յին մէջ արևեստին բնաելացած  
այս նկարիչը՝ անձնական որո-  
նումներու հետամուտ, ինչպէս  
պէտք է ըլլայ ամէն նօմարիք  
արուեստագէտ, ուստու բօրափած  
է ակադեմիականուրիւնը եւ ու-



Օ. ԱՎԵՏԻՍԵԱՆ



Դարձվ

Նկար Օ. ԱՎԵՏԻՍԵԱՆ

զած է տալ անձնադրում գործեր:

Դեռ ուսանողական տարի-  
ներէն՝ Վիեննայի եւ Հռոմի մէջ  
մասնակցած ցուցանամդէսնե-  
րուն, 1929ին սկսեալ է մանա-  
ւանդ՝ նզիպոս զալէ եսք, որ  
յարնաբերած է իր տաղանդը: 1929ին, 1931ին, 1934ին եւ  
1936ին, ցուցադրած է «Սալօն  
տի Քերտի մէջ:

Մասնակցած է նոյնպէս Ա-  
ղեմանդրիոյ Սալօնին, 1931  
թուականին: Նզիպոս զմբուած  
ուշանին, դարձնալ, իր մաս-

Անկցուրիմը դրկած է Լօս Աննելըսի (Մ. Նամանգներ) *International Print Makers Exhibition*ին, 1931, 1933 և 1934 թուականներուն և Պուերտո Շայ Արուեսի Ցուցանանդկսին, 1931ին:

Անհատական ցուցանանդկսներ է տուած Գանիրէի մէջ՝ 1932ին և Աղեքսանդրիոյ մէջ՝ 1934ին:

Արդ ցուցանանդկսներուն մէջ՝ մեծ մասը խմբական, նկարիչը աննկատ չէ անցած: Առաջրուրիմնեն ու համակրուրիմնը գրաւած է արուեստի հնապատճերու, որոնք 50k աւելի օրաբերերու կամ պարբերականներու մէջ, զնանատական տողեր, երեսն՝ ամբողջ սիմակներ նույրած են իրեն:

Սկզբանուի մէջ ծանօթ Ֆրանսացի մասնարական Պ. Մորիք Գրէն 1935ին նրատարակեց Ա-

զիպսոսի բոլոր նկարիչներուն ու հանդակազորներուն նույրուած հատոր մը

որուն մէջ տաերուն ակնարկուրիմ մը միայն ընելով կ'անցնի ու կանգ կ'առնէ, մասնաւոր յամեցումով մը եւ համակրուրեամբ մը, բանի մը ընտրալներու առջեւ, որոնցնէն մէկն և նոյին ՕԾԾիկ Աւետիսիսան: Կ'արժէր մէշքերուններ ընել Պ. Պուերտո Շիրֆէն, ինչպէս նաև զանազան թերերուն մէջ իրեն նույրուած դրուտալից տողերէն, բայց չեն ուզեր խախանի իր յօդուածին ներդաշնակուրիմը՝ իր մասին խօսելով աւելի երկար բան ինչ որ խօսուած է իր արուեստակիցներուն մասին, իր կողմէ:



Նկարիչին հօրը կիսանդրին  
ՏԱԼՂԱԿ' Օ. ԱՎԵՏԻՍԽԵՍԻՆ

Օն. Աւետիսիսան, որ աքուաֆորիսը է, որ մասնագիտուրիմ ընտրած է իրեն ժամանակուր փորագրանկարչուրիմը, չի սահմանափակուիր սակայն իր մասնագիտուրեան մէջ: Փորձած է յաջողութեամբ եւ իւղանների:

Իբր հանգակազոր եւս փայլուն տէպիւ մը ունեցաւ, ձեռակերելով Աղա Կարապետ Գալուսի պռոնզէ կիսանդրին(\*), որուն միանգամայն բաւենոյն ու կորովի արտայայտուրիւն մը կրցած է առ այսինքն ա'յի արտայայտուրիւնը զար պէտք է ունեցած ըլլայ մեծ բաւերարը:

Բարձրագոյն կատարեներու նետամուս այս արտահատագերը, որ մօտածե որոնումի մէջ է, բազմարիւ գեղեցիկ գործեր պիտի այ մեզի դեռ, վասան ենք:

### Յ. ԱՐԱՄԵԱՆ



Կիսանդրի Աղա Կարապետ Գալուսի  
ՔԱՂՋԱԿ' Յ. ԱԽԵՏԻՍԵԱՆԻ

(\*) Ե. Խ.— Տես նախ Տարեցրիս սկիզբը զետպուած մկարք:

## ԱՆԴՐԱՆԻԿԻ ՃԱՇԱՐԱՆԸ

Գրեց՝ ՅՈՒՆ. ՊՈՂՈԽԵԱՆ

Պատմոնի բանուակ փողոցներէն մէկուն՝ թրիմօնթի վրայ է Անդրանիկի ճաշարանը։ Ընդարձակ, ցած սրան մը, յոգնած պատերով, սրոնց տակ՝ շուրջանակի, շարուած են քառանկիւնն սեղաններ, վրանին՝ թուղթէ սփռոցներով և թուղթէ անձեռոցներով։

Ճաշարանին առջև, փողոցը կը լայնայ փոքրիկ հրապարակի մը նաման։ Կեսանքը ամրան այս եղանակին դանդաղ է հան։ Կեսանքը, այդ պահուն ծավեզերքի կոմ պիչերու վրայ է, որոնք լեցուն են ինքնաշարժերով և լոգանք առնող բազմութիւններով։

Ճաշարանին մուտքէն ներս, դըրան անմիջապէս քովը, հաշուեսեղանին առջև նստած է հայ որիսորդ մը, թխաղէմ, ոև ու խորոշկ աշխերով, և կը զբաղի կարելու, սպասելով որ ճաշագինը վճարել զան, իրենց մեկնումի պահուն, ցանցառ թիւով և ուշամասց յանախարդները, սրոնցմէ ենք մենք ալ։ Մեր ուշամընացութիւնը հաշուելուն է և դիտամասնոր։ Մեր նպատակը ճաշել չէ միայն, այլ լսել մանաւանդ. Անդրանիկը, որ վարպետ խոհարար մը չէ միայն, արեւելեան խոհանոցի մասնագիտ, այլ նաև է աշաւդ մը։



Օսմ. Պօղոսեան

Նստած ենք երեք հոգի, հաշուեղանին մօտ, սեղանի մը շուրջ, սրուն վրայ ճաշարանին հայ սպասուորը բերած և մասնաւոր ինումբով շարօն է մեզէն, ոզիի շիշին հետ։ Աշուղը չի կրնար երգել, առանց խմելու։ Ու մենք պիտի ընկերակցինք իրեն՝ մեր համեստ չափովը։

Երեք Հազիկն, որոնք կը կազմեն մեր խումբը, առաջինը Պ. Ժիրոյր Կիւրեղեանն է, յայտնի համաձառն և գործավաճառ, բնիկ Արտրկիրցի: Հին յեղափոխական դէմք է, երրեմբ հնչակեան, մեկնած է Ամերիկային Զէյթուն, 1895ին՝ հերոսամարտին մասնակցելու այս խումբին Առաջ, որուն մէջ էին Ապահ, Միեն, Հրաշեայ, Խնջ միակ վերապրոցն է անոնց մէջ, Ամերիկայաց-թեան հերոսական շրջանի վեթերան մը, որ այնքան յիշատակ-ներ ունի ծրաբան իր սիրախն խորը: Պ. Կիւրեղեանն, — հայր կը կոչեն զինք այժմ — շրջանը ըրած է աշխարհի, տեսած է Զինն ու Հնդիկը, Յարօնը և Պարսիկը: Քանի է Խարաբինի մէջ և ծա-խած Բարիկ ու Խոնտոն: Ամերիկայի շուկան կը ճանչնայ իր հինգ մասներուն պէս: Պոյլիթոնի վրայ իր խանութիր արեւելքի ճամբայ մըն է, ուրկէ կուզան անցնիլ թանկարժէք իրերու սիրա-հարները, իր թառ սկիմերուն և թառ յանցերուն մէջտեղ դէմքը ժպտուն է, թէև տարիներէ ականուած: Խրանը՝ մեծդի և կարչնեղ՝ կազնիի մը պէս, որ փոթորիկներ տեսած է: Սեղանին վրայ տի-րողը ինքն է, իր պատմութիւններով և իր պատկառանքով: Անիկա հիւրասիրան է ազգային Արռա Անդրանիկը, երր Ամե-րիկա եկած էր պատերազմէն յետոյ: Հերռա Անդրանիկին և ա-շուզ Անդրանիկին միջև առանուած մըն է հիմա անոր կեանքը, իր վերջալուսին մօտ:

Երկրորդը Պ. Դասպար Մավսէսեանն է, կամ՝ Փասպարը պարզապէս: Հին դպրոցական ընկեր, ընկեր երիտասարդական օրերու և ապագայի երազներու, պատրաստուած՝ իրրե փոստա-րուն և հին հագուստանդէնի վաճառականի վերածուած՝ իր ճամ-րուն վրայ Կ. Պոլիսէն Ամերիկաւ ճամբայ մը, որուն վրայ յըց-ւած են հայկական իրավանութեան փուշերը, որոնց մէջին սու-կայն՝ անոր լուատեսութիւնը կը ժպտի երրեմբ՝ վարդի մը րոզ-րոջումին նման: Գասպար լուատեսութեան կարմիրը ունի դէմ-քին և համակերպութեան կնճիռը՝ իր ճականին վրայ, որ սոկայն կը մերժէ ճերմակը մազերուն, որոնք ու ու խիս՝ կը յաւեր-ժանան երիտասարդութեան պէս, հակառակ իր հասունցած առ-րիբին:

#### Երրորդը՝ հայ:

Ցաշարանը ամայացած է գրեթէ: Քանի մը հայեր, անգործ թերեւս, կը վարանին հօն, ու կարծ կը մեռն պնակ մը կերու-կարին, որ չի հասնիր: Անկիւն մը նստած է չէկ մազերով Ամե-րիկացի մը, զարծաւորի կամ համեստ պաշտօնեայի մը տեսավով, որ երրեմբ երրեմբ իր այցը կը նետէ, իր ձեռքի թերթին վրայէն, դէպի մնջ:

Որովհետեւ մեր սեղանը սկսած է հետաքրքրքական դառնալ իրեն համար :

Անդրանիկ, ճաշաբանին աէրը, խոհանոցի գործը ըմբռցոծ, բայց պահելով զեռ իր գոզնոցը, մեր քովը եկած է այլիւս, սպասուած ած հիւրի մը պէս: Իր լոյն իրանը դրած է սեղանին անկիւնը՝ քավասի, կանակը զարձած ճաշաբանի սպակի փեղկին: Օդիի զաւաթը ձեռքին մէջ կը բարձրանայ ի պատիւ մեզ և ուժովի մը մէջէն կը հսուի բերնէն վար, շրթունքի մտերիմ ծառմածութենէ մը հրուելով, կը խմենք իրարու կենաց: Հեռաւէն, ամրիքը երկիրներէն եկած հիւրը կը ներկայացուի իրեն: Եւ ուժուաը կը բերուի ներսէն, ինչպէս հարանցու մը, քիչ մը նազէ յետոյ, որ պիտի նստի իր ծունկերուն վրայ, իր գերիին մէջ պիտի փռուի և պիտի թրթուայ երկու ուժեզ և թաւ մազերու տակ կորսուող թեւերու գրկուումէն:

Անդրանիկ բնիկ Առանոցի է, թրքախօս: Իր ժամանակին ու իր երկրին մէջ յայտնի աշուղ է եղած: Ժողովրդական ուրախութեանց մասնակցած է և լացած ժողովուրդին՝ անոր սահմանաները: Եւ իր բանաստեղծական տաղանդին համար նիւթը չէ որ պակասած է: Զարդ ու տարագրութիւն, յոյս և յուստիսարութիւն: Եւ վերջապէս՝ օտար ափեր: Բայց հիմա Պարմն չենք այլիւս, ոչ ալ Թրիմօնթի փողոցի վրայ: Հիմա Առանա ենք, Գոնիա, Պրուսս կամ Կ: Պոլիս: Կամ ուր որ կ'ուզէք՝ Արեւելքի մէկ անկիւնը: Միայն Ամերիկացի մը մեզ կը դիտէ, իր թերթին վրայէն աշքը երբեմն երբեմն հեռացնելով: Ամերիկան դիտող մը:

Եւ ուժուը կ'երգէ, Անդրանիկն ալ իրեն նետ: Նղանակները՝ ծանօթ խաղեր, երկար և ողոքիչ, հառաջանքներ կոկորդի ու հարուածը ձեռքի նուազարանին սիրտին վրայ, որ կը թոթուուի, կը շարժի, կը ծուի ու կը ծառանայ երբեմն ըմբռութեան մը պէս:

Յետոյ՝ երկրորդ գուաթը, յետոյ երրորդը: Մենք վերջացուցած ենք, ան կը շարունակէ: Անդրանիկ խոհարար մը չէ այլիւս, ոչ ալ նաշարանին տէրը: Անիկա հեռացած է միջավայրէն ու շրջապատէն: Իր աչքերուն խորը սիրոյ սպիտներ կան և կիրքի նոպաներ: Կան երազներ և ցոլքեր արցունքի: Լու օրերը ու գէշ օրերը իրարու թեւ առւած, կը պարեն միասին, իր ձայնին ելեւէ լուներուն մէջ: Առանա՛: Երիտասարդութեան օրեր: Եւ յետոյ յոզնութիւնը կեանքին և ծանրութիւնը ներկային, որ կապարի պէս կը ճնշէ իր հոգիին և իր ձայնին վրայ:

Ամերիկացին չի հասկնար: Թերեւս կը ծիծաղի իր ներսէն,

այս խումբին վրայ, զոր չի ճանշնար. Գիտէ միայն թէ Հայեր են անոնք. Ու հաւանաբար կ'ախորժի անսնցմէ, ինչպէս իր կերակուրէն, զոր այս Արեւելքը իները պատրաստած են Թերեւո չին կապեր ունեցած է, համակրանքի կամ գործի կապեր, կամ դրացնութեան՝ այս ճաշարանը յաճախողներէն մէկու հետ. կամ պատահմունք մը զի՞նք բերած նոտեցուցած էր հան։ Ճակատագիրը երբեմն իրարու քով կը բերէ ժողովուրդները և երկիրները. Անդրանիկի ճաշարանին մէջ այդ ժողովուրդներու մէկ քանի ներկայացուցիչները կը նոտին քով քովի, և զիրար չին հասկնար, գո՞նէ իրենց հոգեկան արտայայտութեանց մէջ, որոնց առնենէն յատկանշականը անոնց երաժշտութիւնն իսկ է։

Ամերիկացին ոտքի կ'ելլէ վերջապէս, կ'անցնի հաշուեսեղանին մօտ, մեր քովէն, ու վերջին ակնարկ մը մեր խումբին ու այս զարմանալի նուազարանին վրայ, որուն մէջէն պատմութիւն մը, ժողովուրդի մը պատմութիւնը իրեն երբեք բան մը չկրցաւ ըսել։

ՅՈՒՆ. ՊՕՂՈՍԵԱՆ

## ԱՂՋԹ

Յայիր ի՛ձ, ՅԵ՛Ր, զէր ըսփափա՛նք մռացման...  
Զգիանայի, եր այսպէս ցուռս է այս զիօն,  
Զգիանայի թէ երեկ օքն էր արփաքեր,  
Թէ մօղ ձեսի առեկակին օպք նամացան...

Տըլլա՛Ր, Առաւա՛Ժ, Վայելիին համբ անձուաց,  
Թնկեր բափուր չշիօէկի՛ բրուումը այն,  
Ու սիրան այս եկ՛ չնառալէ՛ հոս բնդումայն,  
Օ՛հ, չկրծէ՛ զիս այս կարօսը երայեաց...

Ոչ Արեիր, ՅԵ՛Ր, ոչ ալ զիմին ամենաբարեկ'  
Մրիւիցէ մռացուրեան զուռք բացին,  
Եր միմայ մարդ իր գրկամիին յաւէ՛ զիտակ...:

Զեկամիին հետ՝ բափա՛փը, ՅԵ՛Ր, մռացումին.  
Ա՛հ, զրբայիր այս ճամբարդի զիօնական  
Ու կը խնդրէ ոչ թէ պետ լոյսը աբւընչեան.

Այլ միմիայն բափա՛փը, ՅԵ՛Ր, մռացումին...

# ՀԱԼԵՊԻ ԱՐՔԱՑԱԿԱՆ ՊԱԼԱՏՆԵՐԸ

Դրեզ' ԱՐՑՈՒԱՆՎԴՅ ԱՐՔԵՊՈ. ՍԻՆԻՐՄԵԽԱՆ

Կ'ըսուի որ հին առենները Հալէպի վեհապետները, առնասպակ քաղաքի պարատներուն մէջ կը ընտկէին առելի, քան թէ Միջնաբերդին մէջ։ Այս պարատներէն մէկը կառուցած էր Ապաէլ-Մալիքի որդի։ Մասլամա՝ 708-9 թուականին, ան-Նասուրայի մէջ։ Մասլամա այս պարատին մէջ ընտկեցաւ, որքան առեն որ կառավարիչն էր Հալէպի, իր եղբօր՝ ալ-Վալիսի առջ, ապա շէնքը կործանեցաւ ու զարձաւ առերակոյտ մը։

Իսկ Շատատ կ'ըսէ. այս պարատին աշտարակ մը միայն կանգան մնացած էր եւ այլ աշտարակներու. ալ քանի մը Անտաքերը, Վերջինը յայտնի եղաւ. որ Պապ Թըննասորինը ամբողջովին շինուած էր այդ միեւնույն առերեալ պարատան քարերովը։

Հալէպի մէկ ուրիշ պարատը յինուած էր Հատիրի մէջ, Մասլամայի եղբօր՝ Սիւլէյմանի կողմէ, երբ այս վերջինն էր քաղաքին կառավարիչը։ Այս պարատը յինուեցաւ ու զորդարուեցաւ առենամեծ խնամք գով։ Այս դզեակէն է որ Հատիր Սիւլէյմանի իր անունը ատացաւ։

Հատիրը կը զանուէր Հալէպէն զուրս եւ կը ներկայացնէր բաւական մեծ գիւղ մը։ Առնասարակ Հատիր կը կոչեն քաղաքին զուրսը զանուող կարեւոր բանակումները (cavirement) եւ որդէն ճիշտ այս բացարութեամբ յիշուած կը զանենք և Մալիքասար էլ-Պուլատնայի մէջ։ — «Հատիրը կարեւոր բանակում մ'է. այսպէս կ'ըսուի թէլլի Հատիրը, եւ կամ հատիրը այսինչ ցեղինս։ Հալէպի մասը կար հասիր մը, որ կը կոչուէր Հալէպի հասիր. ասիկո իր մէջ կը հաշուէր ամէն տեսակ Արաբներ, Թահուիններ են,։ Առողք կռուեցան Հալէպի ընտկիչներուն համարնք սակայն սահմացին զիրենք քաղաքը պարզեցու. Ուրիշ Արաբներ եկան հան հաստատեցին իրենց վրանները, որով Հալէպի Հատիրը գարձաւ մեծ բանակավայր մը։ Ալ-Պալատօրի ո՞ի-

թաղ ալ-Ֆութսահի մէջ կը կարդանք. — Հալէպի մօտ կար Հաս-  
իր մը զոր Հալէպի հասիր կը կոչէին, և որ իր մէջ հաւաքած  
էր ամէն անսակ Արաբներ, Թանուխներ և այլ ցեղախումբեր.  
Երբ Քըննասրինը գրաւելէ վերջ Ապօ. Օպայատ հնն հասաւ, անզ-  
այն բնակչութեան հետ խազազութեան դաշինք մը կնքեց, որով  
բնակիչները պարաւուրցուց գլխահարկը վճարելու. Ասոր վրայ  
անսնք ընդունեցան խրամական կրօնը, ու շարունակեցին մնալ  
միեւնոյն վայրը, թէ՛ իրենք, թէ՛ իրենց զաւակները և թէ իրենց  
թառները, մինչև յանուագոյն թառական մը՝ ար-Մաշիխ խալիֆա-  
յին մասկն վերջ. Ապա այս հասիրին բնակիչները յարձակեցան  
Հալէպ քաղաքի ժողովրդեան վրայ և փորձեցին զանոնք վատարել  
անկէ. Հալիմիաներէ բազկացած Հալէպի քաղաքացիները, յուսա-  
հասաւ, դիմոցին Հալէպի շրջակաները բնակող Արաբ բոլոր ցեղա-  
պետներուն եւ առանցմէ օգնութիւն խնդրեցին, որոնք փութա-  
ցին բնիկներու օգնութեան, առաջին հանողը ըլլալով բոլորին  
մէջ. Զօֆար ալ-Հիւլիի սրդի՛ ալ-Ասպասար, Ասոր վրայ հասիրի  
մարդիկը, չկարենալով անոնց խօսք հասկցնել, զանոնք վատարե-  
ցին իրենց հասիրէն և բոլորն ալ ջարդեցին; Ասիկա կը պատա-  
հէր ար-Մաշիխի սրդի՛ Մուհամմէտ ալ-Ամինի պատամբութեան  
օրերուն: Հասիրի բնակիչները Քըննասրին զազթեցին, որուն ժո-  
ղովուրդը լայն տապնջականութիւն ցայց տուաւ իրենց, հայթայ-  
թելով անոնց անունով և զգեստ: Բայց ապերտիա Հատիրցիք հա-  
զիւ թէ Քըննասրին մասն էին, սկսան գիւղը գրաւել, որուն  
վրայ Քըննասրինցիք զանոնք արտաքսեցին, ցրուելով երկրին  
ամէն կողմերը: Այսպէս անոնց մէկ մասը Թաքրիզ վնաց, մաս մը  
Հայաստան և ուրիշներ մինչեւ Կեռաւոր երկիրներ: Հալէպի հա-  
սիրը անոր կարեւոր արտաքսեներէն մէկը կը կողմէ և շատ  
նշանաւոր էր երկիրն, զանուելով քաղաքին հարաւ արեւմտեան  
կողմը, պարիսպէն նետընկէց մը Առու: Ան կը կոչուի Հատիր  
աս-Սիւլէմանիք: Անոր բնակչութեան մեծագոյն մասը արարա-  
ցած թիւրքէններ են, բոլորն ալ ճարտար զինամարզիկներ: Հան  
զեղեցիկ միտկ մզկիթ մը կայ՝ ուր խորպին կը կարգան և ուր  
կ'աղօթին խմբովին: Ունի բազմաթիւ շուկաներ, ուր կարելի է  
ամէն բան գտնել: Հասիրը ունի իր կառավարիչը: Բայց Քըն-  
նասրինի հասիրը նուազ կարեւոր է, (Պամուրին նազուրի, Բ.

184 էջ):

Իսկ Շատատատ կ'ըսէ. Երբ Ապաստխանները քաշուեցան իշխա-  
նութեանէ, Ալիի սրդի՛ Մուհամմէտի սրդի՛ աս-Սաֆի Ապատլան  
հրաման ըրաւ քանզիւ Հասիրի այդ պալատը և զայն կարծանեցին:

Երբորդ պալատ մըն ալ կը գտնուէր Անսասարայի մէջ (այժ-

մու. էլ-Ասամացըր), ալ-Հասի շրջանին մէջ, Հայէպի կուտակարաբին, ճիշդ անուանակոչմամբ ալ-Ահաս, որ շինուեցաւ, Ազրամ-ալ-Ազիզի որդի՝ Օմարի կողմէ, և ուր կը բնակէր յանախ:

Զորբորդ պարատ մըն ալ զոյսւթիւն ունէր Պիթյաս գիւղին մէջ և զոր կառուցած էր Սալին, որդի՝ Ալիի, որդի՝ Ազտ Ալլահի, որդի՝ ալ-Ապագասի: Հոս էր որ Սալին, կը բնակէր շատ յանախ և ինչպէս որ Խաղն Շատատատ կը վկայէ, այդ պարատան հնագերը կը մնային դեռ մինչև իր օրերը: Խաղնը-Շինինիի վկայութեան համաձայն Պիթյաս կը զանուէր Հայէպէն դուրս, և մտս կը կողմէր պատմագրին հօրենական կոլուածներուն: Խաղն Խալիզան կ'ընդունի և Պաթյասն նշանաւմը, բայց ըստ Թամուսն յատակ անուանց բառարանի, այս բառը իրը յարացոյց (paradigme) նշանակուած է Ժիրապալի:

Խազուր պատմագիր (Ա. էջ 667) կը վկայէ այս առթիւ որ Հայէպիք տանց բացառութեան համաձայն են հստատելու համար: Որ Պիթյաս (ՀՀփոթիլ Անտիոքի հայ գիւղին հետ) գիւղ մըն էր Հայէպի դուռներուն տոջն, ան-Նէյրապի և Պապիլայի միջն: Հայէպի Էմիր Սալինի (ՏԻԸ) որդի՝ Ապատ-Սալիքի որդի՝ Ալի, ևն պարատ մը ունէր, բայց որ՝ գիւղն ալ, պարատն ալ այժմ աւերտած են: Նշանակուած վայրը կը հստատաւի ալ-Պօնուրիի մէկ տաղէն, մէջքերուուն միեւնոյն նեղինակէն, ուր Պիթյաս յիշուած է միաժամանակ Պանագուզայի և Պապիլայի հետ: Շըրք Ազրու Մասլիմ Սոււրիս վերադարձաւ, էլ-Մանսուր Սալինը նշանակեց Հայէպի, Քըննաստինի և Հօմսի կառավարիչ (754): Սալին հստատաւեցաւ Հայէպի մէջ, և քաղաքին դուրս պարատ մը շինեց, կոչելով զայն Պիթյասի պարատ, ան-Նէյրապի մօսու: Խաղն Խաթիզ ան-Նազիրիյա կ'ըսէ: — Կարգ մը հաշիմիթներ Հայէպ բնակեցան, և զայն ընտրեցին իրենց կայան, մերժելով բնակիլ Հայէպէ դուրս ունէ քաղաքի մէջ: Նոյնը ըրաւ նաև Սալին, որդի՝ Ալիի, որդի՝ Ազտ Ալլահի, որդի՝ ալ-Ապագասի: Ան իր պարատը կանգնեց Պիթյասի մէջ: պարատը կանգնած էր ա՛յն բարձրաւանդին վրայ՝ որ կ'իշխուէր ան-Նէյրապի, քաղաքին հիւսիս-արևմտան կողմէն, և որուն ախոռը կ'իշխար մուտքի աջ կողմը, անցքով մը բաժնուած պարատէն...»:

Հինգերորդ պարատ մը կը զանուէր Անտիոքի դրան (Պապ Անթոքիյա) դուրս, կառուցուած Պանու Սալիհներէն, և որ կը կոչուէր Զոյդ Պալաներ (ատ Տարանի), Քուէյզ գետով բաժնըւած իրարմէ, որոնց միջն կամար մը ձգուած էր, և զորս բարձրացուց Սալինի որդի՝ Ազտ ալ-Սալիք, և որոնց շուրջ ամբողջ արտարձան մը կողմուած էր: Այս զոյդ պարատը լրացաւ միայն

Սիմա երկայնաստանի ջանքերով՝ երբ առ Հալէպի կառավարի նատաւաւ։ Ապա ալ-Մալիք լրացուց պարատան անհրաժեշտ նորոգութիւնները և զայն օժանեց նոր գուռով մը, զոր տուաթար էլ-Պինաթէն (Օրիորդաց պալատ) և որ կալուածն էր Հալէպի կարգ մը հաշիմիթներու, Խանը-Շիհնի սակայն կը վկայէ՝ որ այս պարատը կը զանուէր քաղաքին մէջն իսկ. Օրիորդաց փողոցին վրայ (Տարպ էլ-Պինաթ)։ Կրկին այս պարատան արեւական կողմը պարտէզ մը կար, պարատանց անուանով կոչուած, Քըննարինի դրան հիւսիսային կողմը, և որ կալուածն էր Նուրիյա շափի Մէտրէսէին, որ կը կոչուի պարատներէն մէկուն անուան։

Իսկ ալ-Ասիմ իր Զրպան երկասիրութեան մէջ կը վկայէ՝ որ Ապա Անմատ էլ-Մալիքի Հալէպի և ասոր զինուորական սահմաններուն վրայ կառավավարի կարգեց Սիմա երկայնաստանի, երկրին զինուորական պետքներէն և Ապատախոններու պարատիրներէն մին։ Սիմա Հալէպէն գուրք կառոյց հոյակապ պարատ մը, շուրջը զեղեցիկ պարտէզով, որ զանուէլով Պապ Անթաքիայի գուրսը, մինչև հիմա կը կոչուի դեռ Պարատան Պարտէզը (Պուռաման առ-Տար)։ Ասիմա անտարակոյս ա'յն պարատն է, ինչպէս նաև ասոր կից եղաղը, որ նախապէս շինուած էր Սալինի որդի՝ Ապա ալ-Մալիքի որդի՝ Մուհամմէտի կողմէ։ Այս պատճառաւ ալ այդ վայրը կոչուեցաւ աջոյդ Պարտաներս։ Այս երկու պարատներէն մէկը, Թուէյզ գետի մէկ տափն վրայ շինուած, կը կոչուէր աս-Սիւլէյմանիյա, որմէն Հատիր աս-Միւլէյմանիյա անունը, որ է Հալէպի հատիրը։ Սիմա իր պարատան քովը զանուող Թուէյզ գետին կամուրջը վերաշննեց և որուն վրայ հաստատեց Հալէպի մասը եղաղ Հաշիմիթներու ապարանքի մը վերցուած զուռ մը։ Ան ա'յդ ապարանքն էր որ կը կոչուէր Օրիորդաց Պարտ, և որուն անուանով կը ճանչցուէր, ինչպէս որ ըսմնք, Հալէպի Օրիորդաց փողոցը։ Սիմա այդ գուրք անուանեց Դուռ Խաղաղութեան (Պապ էս-Ասլէմա)։

Իսկ Շատատաւ ապա կը յաւելու. կար նաև ուրիշ պարատ մը պարտէզներու, դրան ներսի կողմը, կառուցուած Մուրթատա ա'Ավլայի կողմէ։ Այս Մուրթատա ա'Ավլան, Ապա Նաուր Մանուրըն էր, Լուլուի որդին, Համտանիխոներու ապատագրեալներէն մէկը։ Այս պարատը կը պատճառար փլչի, որով վար տախն զայն և իր տեղայն վրայ շինեցին ժողովուրդի մարդոց համար բնակութեան փաքրիկ առւները։ Ասելի վերջը էլ-Մալիք էլ-Ազիզի իշխանութեան օրով, Ալամ էտ-Տին Թայղար ալ-Զահիրի գնեց այդ մինչյն շնչքերը, բոլորն ալ քանզեց, և քարերն ու այլ շինանիւ-

թերը պատագործեց մեծ ռժայշտարիա» մը շինելու համար, իսկի զետնափոր շտեմաբաններով և չորս կողմը խանութիներով, որոնք իր մանէն վերջ անցան իր զաւկին և յաջորդներուն։ Ապա առանց մէկ մասը ձեռքէ հանուեցաւ 1273ին, ի նոպաստ թագուուրի անշարժ կալուածոց վրայ հակող Պատրատ-Տին էմիրներուն և խազնատար՝ ալ-Մալիք Էզ-Զահիրի։

Կոր վերջապէս եօթներորդ պարտ մը, Սայիֆ առ-Տավլայէ կառուցուած ալ-Հալապայի մէջ որուն ուղղութեամբ փոխել աըրուած էր Թուէյզ զետի ընթացքը, Ալ-Հարպա կը կը գտնուէր Հալէպի մերձակայ վայրի մը մէջ, քաղաքին արեւմտեան կողմը։ Ունէր առողջարար օդ, պարարտ հող և առաւելութիւնը ունէր զետին ափին վրայ գանուելու։ Հօն կը աենուէին այգիներ և ձիամորդարուն մը, նոյնիսկ երկու հատ, ուր տեղի կունենային ձիերու մրցումներ (հալպա)։

Երբ Նիկէֆոր պատշրեց Հալէպը, զրաւեց ինչ որ կար այս պարատին մէջ և չէնքն ալ քանդեց։ Հալէպի իշխանները շարունակեցին բնակիլ այս պարատներուն մէջ, մինչև Միրզապիաններու ժամանակը, որոնք առաջինը եղան հառատառելու։ Միշնաքերդին մէջ և հօն բնակելու։ Միրզապիաններու օրինակին հետեւեցան իրենց բոլոր յաջորդները։

Հալէպ

ԱՐՑԱԽԻԱԶԴԻ ԱՐՔԵՊՈՅԿ.

### Խ Ծ Ն Ծ

Աշխանք նոցրոշէն դժոխն է. Մարդիկ կը բաժնուին տառապող նոզիներու և. տառապեցնող սասաններու։

\* \* \*

Ոչ ո՛վ իմբղիմբ ցոյց կուսայ ինչպէս որ է. իւրաքանչիւր դիմակ մը կը կրէ և յեր մը կը կատարէ։

ՏՈՓԵՆՀԱՊՈՒԵՐ

\* \* \*

Աւելի ապանզ է մուրալ՝ բան զաղմալ. բայց աւելի զեղեցիկ է զաղմալ՝ բան մուրալ։

ՕՍԿԱՐ ՈՒԱՆԵԼ

\* \* \*

Մարդիկ շիրմանվ դարմանել մաքր, բռւառուրիմք, զիշուրիմք, խորհած ևն, երանիկ բլալու համար, անոնց մասին բնու շնունդի։

ԲԱԼԳԱՆ,

## ՈՒՍՏԸ ՄԾՐԿՈՍ

(ՊԱՏՄՈՒԱՆՔ)

Գրեց՝ Ա. ԹՈՒԵՆՈՎ

Այդ չէր ճանշնար Ուստա Մարկոսը... և ինչպէս չճանշնար յին. — մէկուն տանը փլած պան էր շինած, միայն տանիքը կամ սառնինը(1):

Ամէն մարդ բանի մը կը նմանցնէր զայն, և իրիկունները երբ գրացիները քով քովի կուզային, սարէն ձորէն խօսել վերջ, խնդրոյ առարկայ կը դառնար Ուստային քիթը.

— Որ Ուստա Մարկոսը արտէս անցնի, խուօքրը(2) տասնը հինգ օր սարէն մէկու զին կը վաղին, ընի, ընի...

Խօսողը Քելուկենց Արթինն էր, կարճահասակ և զգումի որէս լերկ զլխով մէկը, որ գիւղին մէջ հանրածանօթ էր անոր համար, որ դաշտերը էւերով կը հերկէր:

— Ամմա ըրիր. քիչ մըն ա կենատ նէ աշնես քի սարը տեղէն կը փախչի...

— Սըս... կուզայ Հայկակ(3)...

Հեռուէն կ'երեւի նիհար և երկայնասակ մարդ մը, որ քիչ մը օրօրուն քայլում քով կը մտնար:

Ի՞նչպէս նկարագրել զայն. առէք չըրս հինգ տախտակ ու գամեցէք իրարու. յետոյ ձեռքերուն տեղ երկու փերթ ապուխտ կախեցէք. գլուխուը, — սուսախ(4) մը անկեցէք Հակատակ կողմէն. աչքերուն տեղ երկու ձիթապտուզ, մէկը միւսէն քիչ մը պղտիկ. յօնքերուն տեղ սեւ հաւի մը պոչէն երկու փետուր փետացեցէք. Բներանը չի անենուիր. մացառանման ընչացքը բոլորովին ծածկած է զայն: Եթէ քիթին տեղ տանձ մը կախէք ճակատէն վար՝ լմացաւ:

Առքե՛րը... ան ալ գուց շինեցէք և անունը կ'ըլլայ Ուստա Մարկոս...

(1) Սառնին. — Աներեկի շաւք ամրաելու ժեղ:

(2) Խուօք. — Թուշու (թր.):

(3) Հայկակ. — Կ զածածուի հետը մասմիկին ժեղ:

(4) Սուսախ. — Դղուսի ժանկ մը, որուն նաև կեղեւը իրեւ անմ կը զածածուի զիւդեռու մէջ:

— Պարբեսկոնք...

— Առաջ բարին Ուստա Մարկոս, ինու՞ր ես, զեղերը Բնձ  
կայ չկայ նայինք:

— Եթեր խաղաղութիւն, ա'լ գործ չմնաց:

Թեսաէնց եւաշիկը. որ մինչ այդ լուս էր, զգաց որ ժամա-  
նակն էր ներկաները քիչ մըն ալ իրմով զրազեցնելու...

— Ան ասրին որ Վերուսազէմ զացինք, ծովը Ֆըռքքմայի(1)  
բռնուած էր, քիչ մընաց ու ճողէինք(2), ամամ զարտանը Խիկի-  
լիզ էր առ ազտաեցանք: Մարդը մարդ էր...

— Պապս կ'ըսէր, անոնց երկիրը ծովին մէլին է:

— Բան մը ըսեմ — մէջ մտա Թեսր Աւան, — լուսնկան  
Մարինց դին զացեր է, ալ երթանք պոլոզ նասինք(3)...

— Ասիկակը շխտակ է — ամբողջացուց Ուստա Մարկոս, —  
կնիկա կը սպասէ...

\* \* \*

Ամէն տարի, ամառնօմուտին երր անձրեւները կը գագրին,  
և կեանքը կը սկսի եռալ, Ուստա Մարկոս իր տունը կը քայուի.  
Ճմուղ անցնելէն վերջ, ալ մ'զ տունը նորոգել պիտի տայ:

Սենեկան անկիւնը, մինսկրի(4) մը վրայ նստած, կարկըտ-  
ած ակնոցը քթին, Ուստա Մարկոս կը կարգար:

Աշխարհի վրայ իրեն համար երեք բան կար, ուրագը, և  
երկու գիրք — Պղմնձէ Քաղաք և Եփիմէրտէ: Իսկ կի՞նը :  
«Կնիք ըստդդ մարզու գլխուն փորձանքն է» կ'ըսէր: Բայց,  
իրեն պարտականութիւն կը սեղէր, բարեփոխել զայն. քիչ մը  
սմորդ գարձնեն...

— Սո կնիք... մ'ւր ես կէնէ, եկու մտիկ ըրէ՝ աշխարքի  
բանը իմանաս...

Աւ այսպէս կը կարգար.

«Կու' զգիր տարոյն, և ե՛րթ է, է՛. և տես, եթէ յաւելեալն  
չորս է կամ հինգ. միջացն, հանդերձ պահեաց, է հինգ շաբաթ.  
իսկ եթէ այլ թիւ լիցէ՝ է չորս շաբաթ»:

Անդ կինը սախառած էր երկանը զէմը նստիլ ու մտիկ  
ընել. սէն, աշխարքի բան էս, պէտք էր լոել... մինչև որ կերա-  
կուրին ջուրը հատնէր, ու խանծին հստը տունը լեցնէր. այն  
տան, վեշերը ժողուելով. կը վազէր խոնանց:

(1) Ֆըռքքմա.— Փարուիկ (թթ.):

(2) Ճողէի.— Մելնիկ, սամիկ:

(3) Պոլոզ նասի.— Պառիկի:

(4) Մինսկ.— Բազմոց, (թթ.):

Ուստամ Մարկոս կը կարծէր, թէ կինը խռանաց կ'երթար աւելյու։ Ալզէն կնկան խելքը փորին մէջ կ'ըլլոյն կը մաս-ձէր բարկացած։

— Սո կնի՛կ, ուուր զատիր կէնէ, ես որո՞ւ համար աշ կարդամ...  
— Գրողը ասանի, պատերուն կարգա...

— Անի՛կ չե՞ն մին, կը մալար զայրացած, ու այդ պահուն Ուստամ Մարկոսի գէմքը կը սկսէր փոխուիլ. պղափկ աշքը կը մեծնար ու կը հաւասարէր միւսին, իսկ կղակը կը մասենար քիթը քերելու...  
Զղայնացած, գիրքերը մէկ կողմ կը զնէր, ու կ'ելլէր մին-աէրին վրայէն։ Փորձանք... Զէ՛, Ուստամ Մարկոս կնիկ ծեծողներէն չէր. զատկը գլուխը կը զնէր ու զուրս կ'երթար. քիչ մը Պօղսին որճարանը կը նստէր, իսկ իրիկնադէմին՝ զրացիներուն քով, մինչև լուսնկան Մամիենը դին անցնէր. այն ատան կը զառ-նար առն ու կը մանէր անկողին։

— Սո կնի՛կ, ես որ կը կարդամ, քեղի համար է, մաիկ չընե՞մ, աշխարքի բանը իմանասա...  
Կինը արզէն եօթներորդ քունի մէջ էր և թեթև խոկոցով մը կը պատասխանէր ամուսինին։

Անիկան խելքը արզէն քունին մէջն էն, կը մասձէր Ուստամ Մարկոս ու վերժակին առկ կը պահէր ճակտէն կոխուսած առնձը...  
\* \* \*

Այն օրը գիւղին մէջ իրարանցում կար, լուսինը խաւարած էր...  
Գիւղերուն մէջ լուսինը քաղաքներուն պէս չի խաւարիր, այլ, նաև(1) պառաւ մը անոր առջև վարսազոյր մը կը քայէ՛ զայն զեղեցիկ աստղերէն պահելու համար, որոնք իշխաններ են։

Եւ գիւղացիները կը սկսին կրակել, վարագոյրը պատելու համար. իսկ հրացան չունեցողները կը պոռան կամ թմբուկ կը զարնեն նատը պառաւը վախցնելու...  
Իրաւ աւ, շտամ չի տեսեր, ու լուսինին դէմքը մէջտեղ կ'ել-լէ, նէքեաթներու իշխանուհիներուն պէս սիրուն։

— Աս բանիս առկը բան մը ըլլալու է, ըստ Գումբիենց Մըկըրը։

— Աս մէկակը շիտակ ես,— վրայ տուաւ ուրիշ մը։

— Ուստամ Մարկոսին երթանք,— լուսեցաւ ձայն մը։

Աւ քիչ վերջ գիւղին կէսը հաւաքուած էր Ուստամ Մարկո-

(1) Հատք.— Զար, (թթ.):

սին գլուխը, որ ակնոցը քիթը անցուցած, էֆիմէրտէին էջերը ասդին անդին կը դարձնէր։ Վերջապէս զատեւ, ակնոցը շակեց և քանի մը անզամ հազարէ վերջ, ակտու ակռաներուն մէջէն կարգութ, գիտցած բառերը քիչ մը բարձր, իսկ չգիտցածը՝ կամաց բոյց հասկցուեցաւ որ պատերազմը պիտի ծագի և թագաւորք թագաւորաց վրայ պիտի ելլին, չտա մարդիկ պիտի մեռնին, ամբողջ աշխարհներ պիտի կործանին, և բրազումք թագաւորք մեռնիցին...

— Վա՞յ, վա՞յ, ալ ինչո՞ւ երկինքը աշխարքիս մէջ չժանէ, ալ ո՞ր օրուան համար տապրինք։

— Վազը տէրտէրը կոնչնեց, թող պատարագ ընէ։

— Ամա՞ն ճանը՛մ, բան էր կարգաց. հերու ես ըստ քի Ֆրուրնա աըլլայ, Փալան Գըրան աըլլայ, բան չըլլաւ...»

Խօսողը Բելլակինց Արթին էր, իսկ լողը՝ Ուստա Մարկոսը, որ ինքնիրմէն ելած՝ գիրքը գրապանը խոթեց, ու բարկացած՝

— Սո՞ւ, Արթին, էս աշխարքը աը կործանի ամեմ էնկ էսէջ դուն աը ճազիս...»

Ամբողջ գիւղին մէջ Ուստա Մարկոսին գուշակութիւնը բերնի ծամաց զարձած էր. Անցաւ երեք ամիս ու բան չեղաւ. Անցաւ վեց ամիս ու նորէն բան չեղաւ։

Ինչու կենց Արթինը ուրախ էր, և իր խնդուքը կը լսուէր ամէն կողմ։

— Որ Ուստա Մարկոսը արտէս անցնի, խուշերը տասնհինգ որ սարէն մէկալ գին կը վազին, ըհի՛. ըհի՛...

Ինչզ Ուստա Մարկոսը մատի փաթթաց էր գարձած գիւղին մէջ, ու ինք կը զգար ոյզ, և իր կարգին քին էր ըրած ամբողջ գիւղին. ա՛լ գուրս չէր ելլին. սենեակին անկիւնը նստած, կարկըտած ակնոցը քթին՝ կը կարգա՛ր։

Աշխարհը սև կ'երեւոր իրեն. ինչքա՞ն չար էին գիւղին մարգիկը, կարծիս սատանայէն նոր առած ըլլային. Զէ՛, կը մտածէր ինքնիրեն, էֆիմէրտէն չի սխալիր։

— Սո կնի՛կ...

— Խոչ է կէնէ։

— Էս աշխարքը աը կործանի, կրակ կ'իյնայ էս աշխըրքի գլխուն...

\* \*

1915... էֆիմէրտէն չէր «խորած».

Ամբողջ գիւղը բեռները շալկած, բռնած էր անձանօր նամբան, վախը սրտերնուն, լացը աչքերնուն։ Միայն Ուստա Մարկոսը անտարբեր էր. կարծիս պտոյտի երթար. իր տունը

աեղը ձգած, միայն ուրագը և երկու դրաբերը առած էր, Կնոջ  
թախանձանքը զուր էր անցած, չեր ուղած մինչև խոկ կապոց  
մը վերցնել.

— Պոչ բան է, — կ'ըսէր, — անդիի աշխարքը ի՞նչ ա՛ընթե  
առանց...

Խեղչ Ուստա Մարկոս, Բնչողէս բաժնեցին զինքը եր գեր-  
քերէն, ուրագը ձեռքէն առանելին վերջ՝

— Հոգիս կուտամ, գիրքերս չե՛մ առ, — պատց ժանտար-  
մաներուն:

Ու այդպէս ալ եղաւ, հոգին մարմինէն բաժնելէ վե՛րջ մի-  
այն գիրքերը ձեռքէն առին:

Եֆիմէրտէն չէ՛ր սխալած...

Գանիրէ

Ա. ՔՈՒՐՑՈՂԻՆ



## ԵՂԵՐԵՐԳ

### ՎԱՐԱՄԵԼ ՊԱՏԱՆՈՒԹԵԱՆ ՄԸ ՀԱՄԱՐ



Կը յիշեմ դեռ, կը յիշեմ, Մայր, այսերող ակոսն  
Կարիշ կարիշ վար բախտ արշատոններդ իմն համար,  
Երբ դուն համբոյր մը վերջին դըրիր ճակտիս՝ դողալին,  
Ու յանձննեցիր զիս բախտին՝ ինչպէս տերեւ մաշնանար:

Մայր, սանդուխներ ելեկ ոտիկ այնան յոզնեցան...  
Խուրճ մը լոյսի ի խնդիր ես բախտին մեն մի դուռ,  
Բայց ո՛չ մեկ ամյն հիւրընկազ որւաւ ձայնիս պատախան...  
Ամյոյն ինկայ ամայիին՝ պարիսպներու ամրայուն:

Մայր, ըլքուայ հոն երեք սորտի ո՛չ մեկ ըսպովիանի.  
Լուսրիան ճնք բաւանցուկ մընայի լոկ բարեկամ..  
Ամսէն ձեռքին՝ մուրին մեշ, միւսեցին միշտ սեւ պատանի.  
Իմ մերս ամեն օր վիրող երազներու ժաղկանակ:

Մայր, տարիները անցան եղերեղներ կը ուղիղին.  
Կեանի լոյսին հեռապին՝ ոչ մէկ ժրափիտ բայուեցաւ  
Օրերու զիրկն արինող վլրան շուշրիս բարբառին,  
Ստեղծումի երազին հոգիս մընաց միշտ ծարտ:

Այրեաւումն հակընդդիմ Մայր, առւերներ մըրանած  
Զեր ուրումներ ցըցուեցան ճամբուս վրայ արևիայ.  
Ո՞չ ո՛, ո՞չ ո՛ աչին մէջ սակայն իմ տեղըս ըզդայ...  
Բիշտ հովերու սոյին դիմ ևս առաջա՞ս բայուեցայ:

Մանգաներ սուր՝ ձանձրայսի, Մայր, անիւրնայ հնձնեցին  
Խնչ որ կապրեր տակայն շիդերուս մէջ առնացի.  
Ճիշտ միայն շրբներու բըռան երախը մութին...  
Ու ես իմ մէջ՝ անարօք տեսչեր ամեն բաղեցի:

Մայր, սուրբի շոյս հաւատով սպասեցի ընդ երկար  
Արշալոյսի մերկումին որ ինձ եռ կամսի մը բար,  
Կապոյշին ծոցն ապրնեսող տա՛ր աւտղերկն լուսապար...  
Բայց կը ծաղին արևներ անհորիզոն ափեր:

Ի տես բայսիս ամիծան՝ զոր փետքեցին յար մարդիկ,  
Վերշին բաժակը Յոյսին զա՛րի յարին ևս ուժգին...  
Ու մընացի ցայզային լուսակարօք բիրեռնիկ,  
Մով մը զայռոյք այներու զղում մանում իմ սրբին:

Մայր, պարուած մ'կ բեկ ողոաշ կեանին այս լլորին,  
Բայց դեռ ունի աչին մէջ հնառուկ յուզում պայֆարի.  
Փոխան ունի մանկակի՝ օրերու լուծն իր վլրիմին  
Հնուներկն կը փուրայ կրկին յու զիրկը բարի:

Պայսի զրնեմ նեզ արդիօք, մեր երդիկին տակ նորեն,  
Մայր, մաղենի մը շուշրին՝ տարիներկն դալկաշէմ—  
Թէ պանքումսի մը նման հին արցումինդ փոխարեն,  
Հողակոյշի մը վրայ պիտի արցումին սերմանեն:

# ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

## ԹԱՏՐՈՆՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԱՍԻՆ

Գրիգ' Բ. ԹՈՒԵԱՆ

Գաղթաշխարհը ըեմ չունի այսօր, առկայն ունի բնմական գրականութիւն մը: Ասիկաւ հակադրութիւն մըն է, բայց իրոզութիւն մըն է միաժամանակ: Այսպէս է: մեր թատրոնը կը մեռնի քիչ քիչ, բայց մեր թատերագիրները կը վերածնին կարծես:

Ես կը գտնեմ՝ որ թատրոնի բնոյթն ու ձգտումը շրջան և թատրոնութիւնը են խորունկ ձեւափոխութեարու: Հելլենական թատրոնը, օրինակի համար, արարողական էր իր բնոյթով: Քրիստոնէական շրջանին՝ գարձաւ աղբիւր առողութաշնչական և առեատարանական ներշնչութիւնը Աւելի ուշ՝ վնտուեցան նոր մորիֆները: Նախ պատմութիւնը բերաւ կարեւոր նպաստ մը վերամշշակուող թատրոնին: Ու երեւոն եկան ուսմանը իրիները: Ապա իունիսի հետ բեմ երան ընտանիքը և հասարակութիւնը, անհատն ու պետութիւնը: Այս շրջանը գարձակէա մը եղաւ:

Ֆրանսայի մէջ թատրոնի վերածնունդը կատարուեցաւ: շատ գանգազ: Բառնէյլ լատին կատակերգակներու բնինիքը կատարելագործեց ողբերգութեան մէջ: հանգոյցներ ստեղծեց, զարգացուց զանոնք տեսարանէ տեսարան, անցընելով գործազութիւնը յանկարծանաւ գարձուածքներու մէջէն և պահելով, մինչեւ ամենույթին վայրինանը, զէպքի մը կամ գէպքերու անստուգութիւնը: Իրմէ եւաք նոյն դիմով քալեցին Ռուսինն ու Վոլթէուը, Պոմորչէն, Ակրիպն ու Սարտուն:

Գատանցաւ, որ քանի մը ինքնադրում մարդիկ կրծան թատերական մընուլուց մը ստեղծել, տալով անոր խորութիւն, խոռորդիւն, տարածութիւն: Եւ քաղիր, կէօթէ, իսպէն, Մեթերլինկ յառաջապահներն են թատերական այդ մթնոլորտին: Անոնք քալեցին իրենց ժամանակին հետ և իրենց ժամանակին զուրու: Այսինքն դիմոցան, տեւեցին, ապրեցան: Մաքին համար հորիզոն բացին և զգացումին համար՝ ակաս:

Խոսէն, պարզիս թատերագիրը, ընդունուած կանոնները արևմտորնեց և խռովագիրնեցաւ նուիրագործուած աւանդութիւններէն։ Դիւեր չառւաւ ան, այլ մատղեր ։ Ծարտասանութենէն հեռու փախաւ և հակտորութեան չապաւինեցաւ տպաւորութիւն ձգելու համար կոռուցաւ ամէն բանի դէմ, որ վարդագետութիւն կը բռնէր։ Մնաց ոչ թէ կեանքէն հեռու, այլ անկէ վեր։ Հասուն սարիքին գրեց՝ «Եմնուածապնա Սոլնչսն ու «Սովուն Տիկինը, որոնց մէջ զգայի գերակշռութիւն ունին հոգերանական վերլու-



Նիկոլայ Չամբ արքայ Շաշնաշար Գոհանուսեաւ

ծումները և ուր առաջին գծի վրայ կռւզան կիները իրրե կօփոք, առանց նոյնիսկ թատերախաղին հերոսուհիները ըլլալու։

Խոսէն հարցեր կը գնէր և կը հաւատար, թէ իր պաշտօնը չէր պատասխանել այդ հարցերուն։ Իրեն համար, ինչպէս Նիցչէի (երկուքն ալ պարմարդուու զաղագարուխունները հանդիսացան իրարմէ անկախարար), մարդուն մեծութիւնը կախում ունի իր բնուպդներուն մեծութենէն։ Կին է որ, ըստ Խոսէնի, գիտէ պահպանել այն անգիտակից, ներգոյակ փափաքները, որոնք զերծ են

ամէն տեսակ compromission-է։ Կինն է գարձեալ, որ լաւապէս խրացուցած է հերոսի ու հերոսականի մատյառութիւնը։ Որ Պրանդը բարձրացուցած է ինքնիրմէն վեր, ինչպէս Հիւտէ։ Սուր-նէսը, կամ Խաջն՝ Ռիւտէքը։ Կամ ինչպէս որ է Լեւան Շանթի Հաննան (Ակայարը)։ Կինը հզօր ոյժ մըն է, հպսէնի համար, ընդ-գէմ ընկերույին աւանդութեան և ստութեանց։ Անոր գատերա-խողերուն մէջ, կինն է որ կ'արթնցնէ ու կը խթանէ կամքերը։

1885ին Գերմանիոյ մէջ իպոէն բնապատշ կը նկատուէք, Անգլիոյ մէջ՝ հոգերան, Նորվիեկիոյ մէջ՝ արմատական, իսկ Ֆրան-սայի մէջ՝ սէմպոլիստ և անիշխանական։ Այս առան պայքար կը մզուէք իսէւալիզմի դէմ, և սժուզովուրդի Թշնամին իպսէնի շա-հեցուց անիշխանական մակդիրը։ Այդ գործը համարուեցու տե-սակ մը ամբաստանագիր՝ պետութեան և ընկերութեան դէմ։

Իպսէն ներկայացցուց անհատը, որ կ'աշխատի ազատուիլ ժա-անգամականութեան և գատախարակութեան ներքին կապանքներէն ու հանրային կարծիքի արտաքին նշառմէն։

Եւսոյ կուգայ Մէթէրլինկը, մէկը՝ սէմպոլիստ զպրոցի ա-մենէն գրաւիչ դէմքերէն։ Իր զործերուն մէջ ափրապեազ կը մեռայ փիլիսոփայական և բարոյական մասիսութիւնը, ու անոր կողքին՝ բանտառեղծի թեւաւոր երեւակայութիւնը։ Մշուշ մը յանախ կը ծածկէ Մէթէրլինկի մատուումը (սէմպոլիստ զպրոցին յատկանիցն է տանիք)։ Այդ մշաւչն է որ տառեկաներուն կուտայ անիրականութեան երեւոյթ մը։ Մէթէրլինկ սաեղծէց սէմպոլիստ սղբերգութիւնը ու կրցաւ արտայայտել կեանքի լայն խոր-հուրդն ու հոգիի խորունկ անդամը։

\* \* \*

Ես կը գտնեմ, գարձեալ, որ արուեստին պաշտօնն է նկա-րագիրներ սաեղծել, ոչ թէ մերկ ճշմարտութիւններ ուսումնա-սիրել։ Որովհետեւ արուեստը երեւք ազդած չէ ու պիտի չապրի ճարտառանութեան կեզդ նպաստվը, առոր համար ալ նկարագիրը կը յայտնուի ոչ թէ խօսքի, այլ գործի մէջ։ Հիւկոյ ճարտառա-նութիւնը չփոթեց արուեստին նետ և իր թատերախաղերը ու-սեցան հաեւարական շանչով։

Մեր տեսողութիւնը կրատորական է ու մեքենական։ Արուես-տագէտին պարտքն է խորտակել այդ մեքենականութիւնը և ներդորեական զարձնել մեր տեսողութիւնը։

Արուեստի գործ մը պէտք է ընդույանէ մեր երեւակայու-թիւնը և ընդորձակէ մեր երազին սանմանները։ Պարծողութեան կ'ապամինին անոնք որ ազքատ են երեւակայութեամբ և տառ-

մաթիք գիտերով։ Որ երազել չեն գիտեր։ Որ շարժումը կը նախընտրեն հոգերանութենէն և քարոզը՝ զգացումէն։ Շիրվան-զատէն, օրինակ, զրծողութեան և բռւռն շարժումներու բնազդը աւնեցաւ, իսկ կեւոն Շանթ՝ երազի ու երեւակայութեան։ Մէկուն մէջ կը պահով բանաստեղծութիւնը, միւսին մէջ կը յորդի ան։ Կեւոնքը չունի կարկաներ իր պարզագոյն ձեւին մէջ։ Ար-ուեստագէտն է որ պիտի այս զանոնք բեմին կամ գրականու-թեան, նկարին կամ երաժշտութեան։ Իր պաշտօնը չէ բնաւ ար-ձանագրել կեանքի հասարակ երեւոյթները իրենց նոյնցան հա-սորակ պատկերացման մէջ։ Անոր կոչումն է ստեղծել տիպարներ, այսինքն նկարագիրներ, որոնք ըլլան կեանքն վեր (Օսկար Ռեյլյո պիտի ըսէր՝ նուև կեանքէն դուրս, որովհետեւ արուես-տին կը պատկանին բոլոր այն բաները որ գոյութիւն ունին, և բոլոր այն բաները որ գոյութիւն չունին)։

Այս անդրագարձումները եթէ ուղենք մանաւորել, մեր առ-ջև պիտի գտնենք մարդ մը, որուն կրնանք թատերագիր անունը առաջ։

Այսոն Շանթն է անիկաւ։

Իր խառնուածքին իսկ բերումով, աւելի շատ երազող է ան քան գիտող, աւելի շատ բանաստեղծ քան հոգերան։ Հոն ուր կը պահովի գիտողութեան ոյթը և հոգերանի թափանցող ակնարկը, ոգնութեան կը հանի արուեստագէտը, այսինքն բանաստեղծը, որ գիտէ տիրել իր բաներուն ու պատկերներուն հմայցովը, իր զգացումներուն և մտածումներուն ազնուականութեամբ։

Արուեստագէտը իր սեփական ենը, իր բնութեան տարրերն է որ պիտի դնէ իր գործին մէջ։ Որովհետեւ գեղարվեստական ամէն ստեղծագործութիւն բարցարձակագէւ ներակայական է։ Ինչ որ չկայ ստեղծագործողին մէջ, չի կրնար ըլլալ նուև ստեղծա-գործութեան մէջ։ Անոր համար է որ ըսուած է, թէ արուեստը նմանութիւն չէ։

Շանթի ստեղծագործական տաղմանը գունաւորեց պատմա-կան շրջան մը, Զմշկիկի և Ֆօկասի շրջանը (ոկտյոբը) կենզա-նացուց անոր մագաղաթեայ անշարժութիւնը։ Խորք ու խռովք տուաւ անոր և իր գարձուց զայն։ Ինքինքն բան մը դրաւ անոր մէջ։ Զէ՞ որ գեղեցկութեան դրոշմը, այսինքն արուեստն է որ բանաստեղծութիւնը կը զատէ պատմութենէն, տամը՝ քրո-նիկէն։ Ու չէ՞ որ Հոմերոս գեղեցկութեան այս գրոշմը դրա-ժողովրդական պալլասաներուն մէջ, ինչպէս Շէքսպիր՝ հին քրո-նիկներուն։

Այս նոյն կանոնի հիման վրայ, Շանթի ընութեան տարրերը անցան իր գործին մէջ: Այդ անցումը տեղի ունեցաւ կեղծ անուրշութեամբ մը, տեսակ մը մշուշի մէջն, որ անմիջական ու անհրաժեշտ պահանջն է ուժմասլիսդ զպրոցին, Պալէոփ ու Վեռլէնի ստեղծած շարժումին:

Շանթ իր արուեստին ամբողջ նպաստավը կը ներկայանայ մեղի մանաւանդ իր կանոնի ախրաներուն մէջ, ըլլան անոնք գրական կամ բացառական: Իր կիները գաստիարակող են: Անոնք հարիզոն կը բանան մնը տեսողութեան առջն և կ'ընդլայնեն մեր խաչալներուն առմանը: Մեր հոգին մէջ կը ստեղծեն կարստ, անվերջ որանում, ձգում, երազ ու տենչանք: Հաննան, օրինակի համար, Օնան Գուրզէնի ակնարկը բարձրացոց վեր, մինչև ամիս գամած կատարները: Իցուց անոր հոգին երազի ու խէլլի ծարաւով: արթնցաց անոր մէջ ազնի բնազդներ: Խթանեց կամքը, մզեց զայն թոխչի և որոնումի: Անիկա, Հաննան, «Պանդը» Ակնէն է, ունիուածապետ Սոլնչասի Հիլտէն, կամ Խոչնը: Անիկա Շանթի խաչալին պատկերաւոր ձեւակերպութիւնն է, անոր ընութեան ասքերքն է, անոր եան է, անոր խառնուածքնն սեմպոյի արարայատութիւնն է:


Թատերագիր Շանթ գիտէ կեդրսնանալ իր նիւթին մէջ, գարմնել գործոզութիւնը արագ, բայց ոչ գանովէժ: Թեթև, բայց ոչ հասարակ: ճկուն, բայց ոչ գանձիկ: մեղմ ու զգաստ, բայց ոչ աժգուն ու վատորժ: Ուսի անիկա վառ ու կենդանի երեւակայութիւն, տամաթիկ ընդլայնում նիւթի և գործոզութեան, խնայողութիւն բարի և ժամանակի: Անիկա իրականութեան կը զուգորդէ երազը, խորհուրդին՝ խոկումը, դիտումին՝ զատումը, դիտութեան՝ բանաստեղծութիւնը: Կը գասահարակէ առանց քարոզելու, կ'ազնուացնէ առանց բարոյախօսելու:

Շանթի արուեստը եթէ հզօր չէ, սակայն քաղցր է ու հաղորդական:

Անոր գրականութիւնը կարելի է կոչել երազի, ձգուումի, անհյանքի ու որոնումներու բանաստեղծութիւն: Տեսակ մը սեմպոյի բռեզիա: Անոր համար է որ իր անձերը տելի երազող են քան գործող, աւելի զգացող քան մասնուղ:

Եւ ի՞նչ է կեանքը, եթէ ոչ որոնում ու ձգուում: Անվերջ որոնում և անվերջ ձգուում:

Բ. ԹԱՇԵԱՆ



# ԱՅՅ ՄԸ ՊԵՔԹԱՇԻՆԵՐՈՒ ՎԱՆՔԻՆ

ԳԵՂԻ ՏՈՎՔ. Դ. ՌԱՐՑԻՐՈՍԻՆԻ

Վերջներս, երբ համակրելի բարեկամիս՝ Արտաշէս Յավհանն-նէսեանի և առ չեխ նկարիչ նարօ Հիլդերթի այցելեցինք՝ անոր գեղեցկօրէն կանաւորուած հիւրանոցին ոլուազոյն պատին վրայ նշանաբեցինք Մօքսոթթամի բլուրին կողին վրայ, ժարախն տակը գանուող Պէքթաշիներու խորհրդաւոր թէքքէին նրբերանգ իւղաներկը, որ վերջներս ուրիշ նկարներու և առ գնուեցաւ Փրակայի Ազգը. Թանգարանին համար չեխ մեկնեաւ Պաթայի կողմէ. Անտ առթիւ էր որ որոշեցինք այցելել Պէքթաշիներու Զագոյն ազանդին պատկանող այս միջնագարեան վանքը, որուն պատմութեան միայն ճանօթ ենք. Վերոյիշեալ բարեկամէս խնդրեցի, որպէսզի զիս Պէքթաշիներու թէքքէն առնի և ան սիրով ընդա-



Պէքթաշիներու վամբը Մօքսոթթամ լեռան վրայ

ՆԿԱՐ՝ ՆԱՐՈ ՀԱԼՊԵՐԻՆ

առջ եկաւ խնդրանքին Ուրիմի անցեալ Փետր. 22ին բերդին  
պարայզ անցնելով Գէքթաշիներու թէքթէն գայինք և փափաքե-  
ցանք տեսնուիլ անձնոց շէրիսին Անդա Սիրի Պապային հետ  
Շէրիսը թէկ քիչ մը ուկոր էր, բայց և ոյնպէս մեր խնդրանքը  
չէր մերժած և ծառային հրանանգ տուած էր մեզ թախիթը ա-  
ռաջնորդելու։ Ալգանացի ծառան մեզ մուտքին վրայ շնուած  
փոքրիկ քերաք հրամցուց և մնաք մինչև շէրիսին գալը, վայիկե-  
ցնիք այն զեղեցիկ տեսարանը, որ պարզուած էր մեր առջեւ։  
Ծառ չանցած ներս կը մտնէ Գէքթաշիներու մեծաւորը՝ Անդա  
Սիրի Պապան, որ խիստ համակրելի անձ մըն է և կը կրէ հոյ-  
կական (արժեխօյին) պիպին յատկանիշները։ — Կարճագույն, ետ  
ինկատ ճակատ, բաւական խոշոր քիթ, զուրու ցցուած այսուկիր,  
արտայարտիչ ու թաւային աչքեր, ու մազեր և ցորենի դոյն  
մարթ, Յարզաննազ կը բարենանք ներողութիւն խնդրելով որ  
ձանձրոյթ կը պատճառանք իրեն։

— Ինձ համար միշտ հանելի է խօսակցին պատմաբաններու  
և բանաէրներու հետ — պատմախանեց ժպտելով հեղանամբոյր  
տէրիիշ պապան։ Ծետոյ սուրբը հրամցնելով հարցուց որտեղացի  
ըլլուլ և ուսկից գալու։

Երբ իրեն ըստ թէ Զեխոսովաքիայէն եկած եմ և մեզք մը  
դորեած պիտի ըլլոյի, ևթէ Գէքթաշիներու թէքթէն տեսնելու  
համարէն ինքզինքո զրկէի, Սիրի Պապան զարմոցաւ որ չե-  
խերն ալ իրենցմով կը հետաքրքրուին։ Իրեն անմիջապէս խո-  
տվաննեցայ, որ Փաքք Ասիոյ մէջ ճնած և Զեխոսուանի մէջ մեծ-  
ցած իրեն ցեղակից հայ մըն եմ օնեղակից բառը իրեն զար-  
մանք պատճառեց, որովհետեւ առաջին անգամն ըլլուով կը լոէր  
որ Գէքթաշիները Հայաստիպ կամ Հիթիզոյիտ նեղին կը պատ-  
կանին, ինչպէս Ղըզզլաշները, Սուրբուժները, Թախթաճիները և  
այլն, սրոնք թուրքերուն ու արաբներուն հետ յեղուական կամ  
ցեղային ռեւէ կապ չունին։

— Բայց մնաք մահմետական ենք կրօնքով! — պատմախա-  
նեց Սիրի Պապան, մարտուքը շոյելով։

— Բուք և զերոյիշեալ արմէնօյիտ ցեղերն ալ հայերու նման նա-  
խապէս հեթանոս էից և զանազան գիցեր ու գիցուէներ, ինչպէս Ան,  
Անիսու (Անահիտ), Բշտար (Աստղիկ), Տարգու (Տորք), Տէշուլպ (Տոսով)  
և ուրիշ փաքրանիական սաստամծութիւններ կը պաշտէն Զեր  
ցեղակից Հեթերուն, Հայերուն նման օքշտ է որ զուք և հազար  
արեւելքի կարգ մը ցեղեր յետոյ մահմետականութիւնը ընդու-  
նած էք և կամ Զեղի պարտադրուած է, բայց Զեր և բուն մահ-  
մետականներուն մատյանութեան միջև շատ մեծ տարբերութիւն

կայ: Խըրեւ սպացոյց մեր ըստեին մատնանիշ ըրբնաց ոգեւորուած շէխիին կարգ մը պէտքավական իմաստալից պատմուածքներ Առածեայ, անոր սեղծագործութեան և մանմատականներուան համար արդիուուած կարգ մը ուստիի քններու ու ըմպելիներու մասին Ինչպէս ծանօթ է ոզերից ըմպելիները և խոզի միսը արդիուուած է մանմատականներուան, բայց Պէտքաշիներու ազանդին պատկա-



Դամիեւ Բաղամբ՝ պիտուած Պէտքաշիներու վաճեմ

ՆԿԱՆ՝ ԵԱՐԾ ՀԱԼՎԵՐԹ

Նոզ աէրդիչները և Ղըզըլպոշները ոզիի համար հոզի կու տան և իրենց կրօնական ծեսերուն մէջ ալ շատ յաճախ կը գործածեն զայն: Որո՞ւ ծանօթ չէ Ղըզըլպոշներու սՄում Սէօնտիւ կոչուած կրօնական ծէսը, որու ընթացքին ինչ ինչ գինուրբուքներ տեղի կ'ունենան ղըզըլպոշ գիւղերու: մէջ, իրենց տէտէին ներկայութեան: Տարին անգամ մը, առ հասարակ աշնան, ղըզըլպոշներուն կրօնական պետը՝ տէտէն, գիւղէ գիւղ կը շրջի այս նախաքրիստոնէական ծէսը կատարելու: համար: Երբ սկսնց տէտէն ձին հեծած գիւղ կը հանի, ամէն մարդ գիւղէ անոր գալուն նպատակը: Ղըզըլպոշ գիւղացքին մտխիրին մէջ հփած իր համեղ սնինառ մուրաշ» կոչուած քէօմգէնները, ոզին կոմ գինին կը բերէ ու կը գնէ տէտէին առջև, որ կը սկսի իր սազը զարնել, երգեր ու

խրառականներ ըստ լովից: Այդ կրօնական արարողութեան բնթացքին կը պլուայ վախտ մոմ մը, որ կէս գիշերին, ժամը ճիշդ 12 ին, կը մարեն. և ինչ որ հոն յետոյ տեղի կունենայ, միայն իրենք գիտեն:

Կան նաև կարգ մը ուրիշ մասնեատկան տէրզիշներ, ինչպէս պարզ Մէջէվիները և օրուկան 500 անդամ աքացող Նաքշիբէնտիները, որոնք թուրքերուն հետ սեւէ կապ չունին և կրօնական ըմբռնումով ու վարդապետութեամբ ալ միւս մասնեատկաններէն շատ կը աարբերին:

Թէրեւս բաւն պատճառը այս էր որ Պէտալ Աթաթիւրք 1926-ին Թուրքիայ մէջ արգիլեց բոլոր տէրզիշական ազանդները և անսատազները Մէնէմէնի մէջ կախեց: Թէկ այսօր ալ գոյութիւն ունին հոն կարգ մը ազանդաւորները, բայց իրենց կրօնական արարողութիւնները զազանի կը կիրարկուին: Անոնցմէ մաս մըն ալ այսօր արտասահման (Ադիպատ, Պարսկաստան, Սիւրիա, Իրաք, Ալպանիա և այլուր) ապաստանած են և իրենց գոյութիւնը քարշ կուտան:

Արդ վերագանձնանք Պէտթաշիներուն, որոնց մասին Սիրի Պապան հետեւեալ շահնեկան տեղեկութիւնները կու տայ.—

— Պէտթաշիներու ազանդը ծնունդ առած է Մուհամմէտ մարգարեին ժամանակ և կը յենու Շէրիի օրէնքին: Պէտթաշականութեան հիմնադիրը կը նկատուի ել Սայիտա Մուհամմէտ կար ել: Համ Պէտթաշ, որ ծնունդ է 485 ին, Նիշափուրի մէջ: Անոր հայրը ծանօթ գիտնական ել Սայիտ Խայրանին էր և մայրը ել Սայիտա Խոթում, որ գոււստը էր Շէրի Ահմէտ ել Սայիտ Մուհամմէտ կանկարի Շատ չանցած Համ Պէտթաշ ամրող Արեւելքի մէջ հաջակաւոր գիտնականի մը համբաւին կը տիրանայ և Պէտթաշի ազանդին պետը կը գառնայ: Անըի քան 40 տարի կ'ապրի իրեւ ճգնաւոր մենաստանի մը մէջ, ազօթելով շարունակ: Յետոյ կը հանգիսի Թուրքեատանի մեծապոյն գիտնականներէն՝ Ահմէտ Սատուրի, որ իրեն խորհուրդ կուտայ Պատիիշան երթուլու, Պէտթաշիներու ազանդը տարածելու համար: Ել հետեւի անոր հրաւերին ու յետոյ կը համբարդէ ամրող Փաքը Ասխան, ինչպէս նաև Մէքքէն, ուր կ'այցելէ Մուհամմէտ մարգարէին գերեզմանը: Մէքքէն կը վերագանձնայ Սուլիհէ Թարտ Էօյուք, որ յետոյ Պէտթաշիներու պետին մասնաւոյ ոչ Համ Պէտթաշ կ'անուանուի: Այս վայրը, որ հազգեւէ Պէտթաշիներու կեղրմնը կը գառնայ, կը գանուի Թըր Շէհիրի մաս:

Համ Պէտթաշի ազանդին համբաւը այն աստիճան կը ասածուի որ մինչև Սուլթան Ուրիխանին կը հասնի, որ Համ Պէտ-

թաշ կ'երթայ այս խիստ հետաքրքրական ազանդին հիմնագրին հնա ծանօթանալու և զինքը հրամիրելու որ մասնակցի ԵՀՆԻՀԵՐԻՆերու բանակին հիմնադրութեան Աւրեմի Հաճ Պէտքաշն էր որ արդ առթիւ տուաւ թրքացւած ուաւ և զանազան քրիստոնեայ ազգութիւններէ կազմուած բանակին սԵՀՆԻՀԵՐԻն անուան, որ վերջէն պատուհան եղու Օսմաննեան կայսրութեան գլխավան, ըմբուատնալով անոր դէմ Պէտքաշիներու ազանդին հիմնագրիը կը մեռնի 734ին (ըստ Հինդրէթի) և կը թաղուի Հաճ Պէտքաշի մէջ, որ պէտքաշականութեան համար սրբավայր մը ու ուխտաւեղի մըն է:

Պէտքաշի տէրվիշներու հասպարեան այս ազանդը Սուլթան Բուրնու-քառողի Գանիրէ գալէն տառչ Եղիպատոսի մէջ զեռ զոյսւթիւն չուներ, Եղիպատոսի էլ Մէլիք էլ Սաղէն Հաճի թագաւորին հրամանավու է որ տառջին անգամ ըլլուլով 1388ին կը հաստատուի



Հեյլի Աննեն Սիրի Պապո, Պէտքաշիներու զիստուր,  
և Տօքր. Ն. Մարտիրոսյան

Հայոց  
Առաջի Կարպատների  
Դամբէր — Ռազուիս

Պէտքաշիներու թէքքէն, որ նախապէս կը գտնուէր Թասր-Ել-Ամբի փողոցին վրայ, հետ ուր այսօր կը գտնուի Զէխոսլովոքիոյ գեղագնառուները. Գետիկան հիւնազանոցին մասերը: Եղիպատոսի մէջ այս ազանդին հիմադրութեանը նախաձեռնորկ եղած են ել Սայիտ և Ապու. Ապոտոլյան ել Մազատորի Պէտքաշիները, որոնց գերեզմանները կը գտնուին դեռ. Մաքաթթամի ժայռարլուրին տակ գտնուող լայնածառալ քարանձաւին մէջ, ուր աշխարհի չորս



Տօք. Ն. Մարտիրոսյան, Պէտքաշիներու վանդալ պարագային մեջ:

ծագերէն ուխտաւորներ և հետաքրքիրներ կուգան, բերելով իրնց հետ մասսազ և նուէր, ատանալու համար տէրվիշ պապաներու օրնութիւննը:

Վերջերս, երբ քարեկումիս հետ այդ քարայրին մէջ գտնուող գերեզմանները աչքէ կ'անցնէինք, յանկարծ տեսանք թէ ինչպէս քարեպաշտ ուխտաւոր մը Ծէլս ել Սայիտի գերեզմանին շուրջ կը առաջակէր այդ խորհրդաւոր քարանձաւին մէջ, սոսկում պատճառելով մեղի:

Պէկթաշիներու ազանդին պատկանող տէրվիշներուն նպատակն է իրենց կեանքին մէջ բոլորովին հեռաւ. Առաջնորդներէ, կոպ պահել Աստուծոյ հետ շարունակ Ալլահ, Ալլահ՝ ըսելով: Այս ա-

դանդը ունի ինքնահառուկ վարդապետութիւն մը, որ շեշխարումիջցաւ. կ'աւանդուի իրենց հետեւ ոզներուն Դմբախոսարար Պէքայիներն ալ կը հաւատամն, ուրիշ ոզգերու պէս, հանգերձեալ կետեի մը զոյսւթեան, միակ բանը որ Պէքայիներու վերագրուած ողջմուռ թիւնը ու սրամառութիւնը չ'արգարացներ:

Վերշին այցելու թեամս ընթացքին Սիրի Պապային հարցուցի թէ ինչո՞ւ. Պէքայիները մարդարէին կողմէ արգիլուած ողին կը խմնի. հետեւեալ սրամիտ պատասխանը տոււած ան.—

— Բոլոր իսլամներուն արգիլուած է մետաքս հազոււստ կը-րելը, բայց անոնք կը հազնին հիւսուածքին մէջ կանեփի խառնելով. ուրեմն մննք ալ ողին կը խմնի անոր քիչ մը ջուր խառնելով:

ՏՈՒԹ. ՆԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



## ԾԱՂՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ե Հ

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐՈՒԽԱՆ

ԴՐՅՈ Հ. Գ.

Նկարյութեան մէջ զնդեցիկն է արշայայութեամ դրխառոր նպաւակը արուեստի գործին. զարափարը, իմաստը՝ բազում, ստեղ ամսեկնելի, երեմն անրախամցնի խորին են անոր, որոնք վեճուրիւն մը կուտան նկարին. բայց անոր արժեկին յահանիշն ու յայտարար յնն նկատուիր: Մարդանկարիչը, սակայն, իրեն գծագրից, արուեստագետն է որ իմաստը կը փնտու և զարափարի մը կը գտի անպայման: Մարդոց միտքը, զարափարները, նողին ու գործերը անմիջական առնյուրիւն ունին իր արուեստին հետ: Նկարյական արուեստին մէկ կամ միւս միւսին ծառայող ոչ մէկ արուեստագետ այնքան յի խառնուիր ընկերային կեամի իշականութեամ, որին ծաղրանկարիչը կ'ընէ իրեն ու մարդերը ճանշնարու համար, այնպէս ինչպէս որ են անոնք ոչ ոք՝ ինչպէս որ ան պիտի ենեակայիր որ ըլլայիմ:

Աւայի ծաղրանկարիցը այնքան ճառքար է ու հանճարեղ, որին կարող է բափանցել մարդոց հոգերանուրեան և անոր չնզու տալ իր արտադրած զիձերով. կենսունակ արտայայւուրեան մը շնորհիւ:

Որովհեծն, վերցապկս ծաղրանկարչուրեան իշխալը ծաղրել և նեզմեն յի երթի, ան յի նաև այն արուեստներն, որոնի պահէմը իսկ «արուեստ արուեստին համար» անտարքեր սկզբունքը կրնան որդեգրել՝ կենամին և մարդոց համեյս:



152

Ա. Սարգսյան՝ իմբ

Մաղրանկարիցը արուեստագետ մըն է, որուն նպատակը, դիտումը, միշտ յայտնի են: Ան ընդհանրապես բարոյախօսող մըն է առանց երթի այդպիս կարծել տարու: Մարդիկ ուղղաղ, առանց երթի յիշեցնելու և բանու ամիկա իրենց, այլ պարզապես բողոք որ անոնք ենթարկուին ծաղրանկարին կրիչ ազդացուրեան անջիշակցար, անաւասպիկ արուեստ մը որ կօգտագործէ մարդկային թերիներն ու պիւալները ոչ քե միայն զանոնք սրբագրելու համար, այլ անոնց

կրկնումը, զարգացումն ու ժաւառումը արդիերու նպատակաւ զիտ շեշել ու ձևանձելի դաշնակ անոնց տղթութիւնը :

